AZG NEW PDF.qxd 06/05/2010 22:28 Page 1

Ազգ
Azg
7 ՄԱՅԻՍ 2010 ՈՒՐԲԱԹ 83 (4463)
ISSN: 1829-1651

# Թրաֆիկինգի զոհ են դառնում երեխաները

Անչափահասներին աշխատանքային եւ սեռական թրաֆիկինգի ենթարկելու համար մեղավորները դատապարտվել են 7 տարի ազատազրկման: Նախորդ տարի բացահայտված 3 դեպքերից 2-ի դատավճիռները կայացվել են մի քանի ամիս առաջ: Թրաֆիկինգի ենթարկված 8 անչափահասներից մեկը ենթարկվել է սեռական շահագործման, 7-ը՝ հարկադիր աշխատանքի: «Երեխաներին ստիպում էին մուրացկանությամբ զբաղվել, իսկ 17 տարեկան աղջկան հարկադրել են սեռական ծառայություններ մատուցել», «Արմաս» ակումբում երեկ ասաց սոցիալական ապահովության նախարարությանը կից թրաֆիկինգի դեմ պայքարի ռեսուրսային եւ աջակցության կենտրոնի իրավաբան **Դավիթ Թումասյանը**: «Երեխաներին մուրացկանությամբ ստիպում էր զբաղվել նրանց մոր քաղաքացիական ամուսինը: Դեռ ավելին՝ դատավարության ընթացքում այդ կինը պաշտպանում էր իր ամուսնուն եւ ստիպում, որ երեխաները փոխեն ցուցմունքները», ասաց Դավիթ Թումասյանը: Տես էջ 2

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Թաղային տեսո՞ւչ, թե՞ քննիչ

Անկախությունից անմիջապես հետո Հայաստանում տեւական ժամանակ վերացվեց թաղային լիազորների ինստիտուտը: Այն համարվեց նախկին խորհրդային ճնշիչ կառույցներից եւ, ի դժգոհություն ոստիկանության ու դատախազության փորձառու աշխատակիցների, վերացվեց: Անձամբ եմ լսել երկար աշխատանքային փորձ ունեցող քննիչների եւ անվտանգության այլ աշխատակիցների գանգատը՝ թաղային լիազորն է, որ առաջին ձեռք տեղեկություն է հավաքում հանցագործների, նախապատրաստվող հանցագործությունների մասին: «Սովետի ժամանակ, ասում էին նրանք, մի ժամում կարող էինք ձերբակալել յուրաքանչյուր գողի, հանցագործի, շնորհիվ թաղային լիազորներից ստացված տեղեկության»:

Այդ պնդումների ապացույցն ինձ համար հայտնաբերեցի... Մ. Նահանգներ այցելություններիս ընթացքում, հետաքրքրվելով ամերիկյան թաղային ոստիկանության գործունեությամբ: Վերջիններս վերահսկողության տակ են պահում իրենց վստահված թաղամասը, հետեւում յուրաքանչյուր արտառոց շարժման, հսկում թաղամաս նոր եկածներին եւ անհրաժեշտության դեպքում միջամտում:

Նպատակ չունեմ եւ ի վիճակի չեմ այստեղ համեմատելու խորհրդային եւ արեւմտյան վերահսկողական ծառայությունները, նրանց քաղաքական կամ «գաղափարախոսական» եւ կամ մասնագիտական տարբերությունները: Կյանքը ցույց տվեց, որ անկախ Հայաստանում նույնպես անհրաժեշտ նկատվեց հասարակական անվտանգության համար վերականգնել թաղայինների ինստիտուտը՝ ավելի քաղաքակիրթ անվանումով՝ թաղային տեսուչ: Բայց... ինչպես ամեն նորամուծություն մեզ մոտ, այս մեկն էլ այժմ ենթակա է այլասերման, անշուշտ, եթե վերահսկողության չենթարկվի վերահսկողական այդ կառույցը:

Փա՞ստ: Օրերս ստացանք Երեւանի Կենտրոն համայնքից վկայություն, թե իրեն ինչպես սանձարձակ ու անկիրթ է պահել թաղային տեսուչներից մեկը: Կոպիտ եւ տիրական նա մտնում է Աբովյան փողոցի շենքերից մեկը, զարկում բնակարանների դռները եւ մանրամասն հարցաքննում բնակիչներին: Տեսուչը նման ձեւով է վարվել նաեւ Ֆրանսիայից ժամանած 70 տարեկան պատկառելի մի զույգի հետ, որն արդեն 15 տարի բարեգործական հրաշալի ծրագիր է իրականացնում Արցախի գյուղացիների համար: «Ձեր սեփական բնակարա՞նն է սա», կոշտ ու կոպիտ հարցրել է հասցափոր տեսուչը մեր ֆրանսահայերին եւ դրական պատասխան ստանալուց հետո շարունակել է հարցաքննությունը՝ «ի՞նչ եք անում այստեղ, աշխատանք ունե՞ք Երեւանում, որտեղի՞ց է ձեր եկամուտը, սեփական մեքենա ունե՞ք, իսկ զարա՞ժ» հարցաշարով: Եվ ապա հնչեցրել է իր ամենախորաթափանց հարցումը՝ «անդա՞մ եք որսորդ միությանը» եւ հյուրերի համար անհասկանալի այդ հարցին բացասական պատասխան ստանալուց հետո տվել է վճռական հարված-հարցը՝ «զենք ունե՞ք»:

Պատկերացնել կարելի է այլայլված, ինչ-որ տեղ վախեցած, ինչ-որ տեղ տրտնեղած վիճակը ամոլի: Ո՞վ է այս մարդը, ի՞նչ իրավունք ունի հարցաքննելու, ո՞ւմ հրահանգն է կատարում, եւ ինչո՞ւ է ձեռքի հաստ տետրի մեջ ինչ-որ բաներ արձանագրում:

Եվ իսկապես, ո՞վ է թաղային տեսուչը, ի՞նչ լիազորություններ ունի եւ ո՞վ է վերահսկում նրա գործողությունները քաղաքացիների ու հյուրերի նկատմամբ:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Արատավոր շրջան

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ըստ թուրքական լրատվամիջոցների՝ Թուրքիայի արգործնախարար Դավութօղլուն ասել է, թե Թուրքիայի եւ Հայաստանի (անգամ՝ Ադրբեջանի) դիվանագիտությունը մի քանի ամիս լուռ է լինելու, եւ միայն այդ ամիսներից հետո են որոշակի քայլեր ձեռնարկվելու հայ-թուրքական արձանագրությունների եւ Կովկասում խաղաղություն հաստատելու ոլորտում: Եթե հավատանք այս տեղեկատվությանը, ապա դա նշանակում է, որ հայ-թուրքական արձանագրությունները երկար ժամանակով պահածոյացվեցին արդեն թուրքական կողմի պաշտոնական բացատրությամբ, եւ դրանք երկար ժամանակ հազիվ թե քննարկվեն խորհրդարանում կամ արտաքին քաղաքական օրակարգի թեմա դառնան, բայց եւ Թուրքիան հիմա ժամանակ առ ժամանակ ավելի ինտենսիվ պոչ կխաղացնի:



Իսկ մենք հանգիստ արձանագրենք, որ հայ-թուրքական արձանագրությունների շուրջը քաղաքական ֆուտբոլը Հայաստանի ներքաղաքական դաշտում այժմ իր տեղն է զիջում մի այնպիսի տարտամության, որը դեռ մեկ, մեկուկես տարի առաջ էր արդեն դանդաղորեն նստում մառախուղի պես՝ ցուցանելով մեր կոտրատված ու ծակծկված ներքաղաքական քարտեզը, սակայն մի պահ մառախուղը ժամանակավորապես ցրվեց՝ հայ-թուրքական թեման մի պահ երկրորդ շնչառություն էր տվել մեր չորացող ճահճին: Իսկ այժմ ոչ մի օրակարգ չունեցող մեր քաղաքական միավորներից շատերը շփոթված են վերջնականապես՝ քողազերծ եղած իրենց սնանկությամբ: Ընդ որում՝ ոչ միայն արմատական ընդդիմադիր դաշտը որեւէ կենսունակ ֆորմուլ, կամ առարկայական խոսակցություն չի առաջարկում, այլեւ իշխող Հանրապետական կուսակցությունն է մի տեսակ հնացել ու ոսկրացել (ում շատ է տրված, նրանից շատ է պահանջվում), ու եթե հիշենք նրա ղեկավար Սերժ Սարգսյանի ելույթը կուսակցական համագումարում՝ կուսակցությունն արդիականացնելու եւ մի շարք այլ հրամայականների մասին, չենք գտնի մի մարդու, որ այդ ասածները առարկայորեն իրագործված համարի կամ իրագործումը հնարավոր տեսնի: Իշխելը մի այնպիսի բան է, որ հեշտորեն բթացնում է զգայարանները, տեսողությունն ու հոտառությունը (անհատի եւ կուսակցության), կտրում իրականությունից, սա ապացուցված է կյանքով: Տես էջ 3

## Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների մոտակա հանդիպման ակնկալիքով

«Համանախագահներն ակնկալում են Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպում Եվրոպայում մոտակա օրերին՝ քննարկելու, թե ինչպես առաջ տանել բանակցությունները», այսպիսի հայտարարություն են տարածել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ **Յուրի Մերզլյակովը** (Ռուսաստան), **Բեռնար Ֆասիեն** (Ֆրանսիա) եւ **Ռոբերտ Բրադկեն** (Միացյալ Նահանգներ) երեկ, մինչդեռ Վիեննայում նրանց հանդիպումը տեղի է ունեցել մայիսի 5-ին:

ԵԱՀԿ պաշտոնական կայքէջի տեղեկացմամբ, համանախագահների հանդիպմանը ներկա է գտնվել նաեւ ռուսաստանցի նոր համանախագահ Իգոր Պոպովը, որին ԵԱՀԿ Մինսկի խմբին արդեն պաշտոնապես ներկայացրել է Յուրի Մերզլյակովը: Հանդիպմանը համանախագահները ընդգծել են բանակցային կողմերի՝ առաջընթաց գրանցելու պատրաստակամությունը:

Ըստ News.am գործակալության, Վիեննայում տեղի ունեցած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հերթական հանդիպումն անցել է փակ դռների հետեւում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Անհասկանալի պատճառներով Հայաստան գազ չի մտնում

«**Ազգը**» նախորդ համարներում տեղեկացրել էր, որ այս օրերին Հայաստանում գազամատակարարումը կատարվում է ի հաշիվ երկրում ունեցած պահուստների, քանի որ Վրաստանի բարձրլեռնային շրջաններից մեկում Ռուսաստանից եկող գազատարը վնասվել էր: Վրացական կողմը հայտարարել էր, որ խնդիրը կլուծվի մինչեւ մայիսի մեկը, սակայն մինչեւ այսօր Հայաստան գազ չի մտնում: Պարզվում է, սակայն, որ գազատարն արդեն վերանորոգված է. «Մեզ համար անհասկանալի պատճառներով գազը Հայաստան չի մտնում: Վրաստանը չի վերականգնում գազամատակարարումը», նշել է «Հայռուսգազարդի» մամլո քարտուղար **Շուշան Սարդարյանը**: Իսկ վրացական կողմը, ըստ «Նյուզ.ամ»-ի, պարզաբանում է, թե գազատարում իրականացվում են փորձարկման գործողություններ, եւ Հայաստանի գազամատակարարումը կվերականգնվի միայն դրանց ավարտից հետո», իսկ թե ե՞րբ արդեն վերականգնված գազատարում կավարտվեն նաեւ փորձարկման աշխատանքները՝ վրացական կողմը «Նյուզ.ամ»-ին չի պարզաբանել:

Հ. Ա.

## «Հայաստանի հետ մեր հարաբերությունները ավելի լավ վիճակում են, քան մեկ տարի առաջ»

### *Հայտարարել է Դավութօղլուն՝ մեկնաբանելով արձանագրությունների վավերացման ընթացակարգը կասեցնելու Հայաստանի որոշումը*

Հ. ՉԱՔՐՅԱՆ

Ապրիլի 22-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարել էր, որ առանց Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացից դուրս գալու, Հայաստանը կասեցնում է հայ-թուրքական արձանագրությունների վավերացման ընթացակարգը: Նրա հայտարարությանը դրականորեն արձագանքել էին պաշտոնական Վաշինգտոնը, Փարիզը, նաեւ Մոսկվան: Դա արծարծվել էր աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցների հաղորդումներում, հայկական եւ թուրքական մամուլում: Արձագանքել էր նաեւ Անկարան, բայց ոչ պաշտոնապես:

Թուրքական մամուլը տարբեր մեկնաբանություններ է տվել ՀՀ նախագահի հայտարարությանը, սակայն մյուս լրատվամիջոցները դրա առնչությամբ հանգել են ընդհանուր հետեւության, ըստ որի՝ Թուրքիան պատրաստ չէ արձանագրությունների վավերացմանը, ուստի ժամանակ է ձգձգում, ինչի պատճառով սառեցվում է նորմալացման գործընթացը:

Երեկ Կիեւ ուղեւորվելիս, գործընթացի մասին հարցով Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուին է դիմել «Միլլիեթի» հեղինակ Թահա Աքյոլը, գրելով. «Ինքնաթիռում հարցնում եմ. «Արձանագրությունները մահացե՞լ են»: Պատասխանում է, որ ոչ, դեռ ապրում են: «Կարո՞ղ եք ասել, որ սառնարան են դրվել» հարցին ի պատասխան՝ Դավութօղլուն ավելացնում է. «Կարող եք նաեւ այդպես ասել: Նայած, թե որ տեսանկյունից եք մոտենում: Ես գործընթացը վերլուծեք, կտեսնեք, որ Հայաստանի հետ մեր հարաբերություններն ավելի լավ են, քան մեկ տարի առաջ: Շատ ավելի լավ վիճակում են Ադրբեջանի հետ հարաբերությունները: Կնճռանկի գեսը չի սառցակալել, հոսում է»»:

Դավութօղլուի այս խոսքերը հիմք են տալիս Աքյոլին ենթադրելու. «Ինչպես երեւում է, կողմերը հանգել են «եռակողմ համաձայնության»: Առաջիկա մի քանի ամիսներին Անկարան, Բաքուն ու Երեւանը «լուռ դիվանագիտություն» են բանեցնելու: Խուսափելու են հասարակությանն ալեկոծող հայտարարություններից: Իսկ հետո սկսվելու են ինչպես արձանագրությունների, այնպես էլ՝ Կովկասի հիմնախնդիրների առնչությամբ դրական քայլերը»: Տես էջ 3

## Որտեղ ենք ավելի շատ կաշառք տալիս

2009-ին Հետազոտությունների ռեսուրսների կովկասյան կենտրոնը հասարակության շրջանում հարցում է անցկացրել, թե ո՞րն է ամենակոռումպացված մարմինը Հայաստանում: Ըստ այդմ պարզվել է, որ երկրում ամենակոռումպացված 4 ոլորտներն են առողջապահությունը, դատախազությունը, ընտրական համակարգը եւ կրթությունը: Սրանց հետեւում են հարկային ծառայությունը, պետավտոտեսչությունը, ոստիկանությունը, մաքսային ծառայությունը, բանակը եւ այլն:

Հ. Ա.

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Նորայր Ադալյանի թատերախոսությունը՝ Երեւանի դրամատիկական թատրոնի նոր՝ Վիլյամ Շեքսպիրի «Հուլիոս Կեսար» բեմադրության առիթով:

Լեզվի պետական տեսչության պատասխանը մշակութային հավելվածի նախորդ համարում տպագրված Լեւոն Սարգսյանի 4 հոդվածներին:

Կենսագրական էջեր: Հրաչյա Քոչարը՝ ռազմաճակատային թղթակից. Մարիետա Խաչատրյանի անդրադարձը:

Վերստին հայոց լեզվի մասին. Նորայր Բեյլերյանի մտահոգությունները մայրենիի ներկա վիճակով:

Հայաստանի եւ Սփյուռքի նորընծա հրատարակությունների՝ Գեւորգ Յազըճյանի ամփոփում-հրապարակման շարունակությունը:

Դանիել Երաժշտի ձոնը հայ մշակույթի հավերժական երախտավորին՝ Մեծն Կոմիտասին:

Անահիտ Հովսեփյանի զրույցը Տիգրան Մանսուրյանի հետ՝ Գերմանիայում տեղի ունեցած համերգի տպավորությամբ:

Ս. Բ.

# Մարդու վերարտադրության խնդիրները չեն կարող լուծվել միայն բարի ցանկություններով

«1989-90 թթ. Հայաստանում կատարված հետազոտությամբ հայտնաբերվեց, որ կանանց առաջնային անպտղությունը կազմում է 3,2 տոկոս, իսկ երկրորդային անպտղությունը՝ 21,4 տոկոս: 10 տարի անց դարձյալ կատարվեց հետազոտություն եւ պարզ դարձավ, որ կանանց առաջնային անպտղությունն արդեն կազմում է 3,4 տոկոս, իսկ երկրորդային անպտղությունը՝ 28,5 տոկոս: Այդ անգամ հետազոտության մեջ ներգրավված էին նաեւ տղամարդիկ, որոնց առաջնային ամլությունը կազմեց 3,3 տոկոս, իսկ երկրորդային ամլությունը՝ 15,2 տոկոս», երեկ «Դե ֆակտո» ակումբում՝ ասուլիսի ժամանակ, տեղեկացրեց առողջապահության նախարարության աշխատակազմի բուժօգնության կազմակերպման վարչության մոր եւ մանկան առողջության պահպանման բաժնի գլխավոր մասնագետ **Գայանե Ավագյանը**:

10 տարվա ընթացքում անպտղության եւ ամլության ցուցանիշների բարձրացման հիմնական պատճառը, ըստ Գայանե Ավագյանի, սոցիալական ծանր պայմաններն էին, որոնք բացասական ազդեցություն թողեցին նաեւ մարդկանց վերարտադրողական առողջության վրա:

«Ցուցանիշները մտահոգիչ էին, եւ արդեն բավականին լուրջ միջոցառումներ ձեռնարկվեցին՝ ուղղված վերարտադրողական առողջության բարելավմանը, որից հետո 2008-2009 թվականներին եւս մի հետազոտություն կատարվեց: Արդյունքները փաստեցին, որ կանանց անպտղությունը կրկնակի նվազել էր, իսկ տղամարդկանց ամլությունը նվազել էր մոտավորապես 3 անգամ», տեղեկացրեց Գ. Ավագյանը:

Այսօրվա դրությամբ կանանց առաջնային անպտղությունը կազմում է 5,3 տոկոս, երկրորդայինը՝ 11,5 տոկոս, իսկ տղամարդկանց առաջնային ամլությունը՝ 2,7 տոկոս, երկրորդայինը՝ 2,6 տոկոս:

«**Ազգի**» հարցին, թե հատկապես ո՞ր գործոններն են առաջացնում կանացի անպտղություն, Գայանե Ավագյանը պատասխանեց. «Անպտղության պատճառների կառուցվածքում ավելի հաճախ է պատահում բորբոքային հիվանդությունների հետեւանքով զարգացող փողերի անանցանելիությունը, ավելի քիչ հանդիպող պատճառներից են, օրինակ՝ արգանդի կառուցվածքային խանգարումները: Քիչ չեն նաեւ չբացահայտված պատճառները, երբ զարգացման այսօրվա պայմաններում զույգերի մոտ այդպես էլ հնարավոր չի լինում հայտնաբերել պատճառները»:

Ըստ տարիքային խմբերի՝ կանանց անպտղությունն ավելի տարածված է 25-32 տարեկան մարդկանց խմբում: Եթե աղջիկն ամուսնանում է 15-16 տարեկանում եւ 1-2 տարի չի հղիանում, դա անպտղություն համարել չի կարելի, քանի որ անպտղությունը վերաբերում է միայն սեռահասուն մարդկանց՝ 18 եւ ավելի բարձր տարիքի աղջիկներին ու կանանց:

Հայաստանում առաջին հղիության դեպքերի 80 տոկոսն արձանագրվում է 25-30 տարեկան մարդկանց մեջ: Ավելի բարձր վերարտադրողականություն ունեն 25-ից բարձր տարիքային խմբի տղամարդիկ եւ 22-28 տարեկան աղջիկները:

«Եվրոպայում ու Ամերիկայում արձանագրվում են նաեւ սոցիալական անպտղության դեպքեր, երբ կինը հանուն կրթության եւ կարիերայի ուշ է ամուսնանում: Այսպիսի խնդիր վաղ թե ուշ առաջ կգա նաեւ Հայաստանում: Ֆրանսիայում այսօր միջինը 31 տարեկան կանանց մեջ է լինում առաջին ծննդաբերությունը: Պտղաբերության 10 լավագույն տարիները կանայք կորցնում են սոցիալական խնդիրների պատճառով», ասաց ասուլիսի մյուս բանախոսը՝ Մարդու վերարտադրության կենտրոնի տնօրեն **Էդուարդ Համբարձումյանը**, եւ հավելեց, որ մի տարի առաջ Եվրոխորհրդարանը կոչ արեց եվրոպական երկրներին, որ բուժօգնության մեթոդները բոլոր զույգերին տրամադրվեն մատչելի կերպով, որպեսզի ե՛ւ վերջիններս բուժվելու հնարավորություն ունենան, ե՛ւ այդ ձեւով բարելավվի Եվրոպայի ժողովրդագրական վիճակը:

Ըստ Էդուարդ Համբարձումյանի՝ Հայաստանի ժողովրդագրական վիճակը եւս վատ վիճակում է: Եթե մեր երկրում բնակչության աճը մնա այսօրվա տեմպերով, ապա 40-45 տարի անց բնակչության թիվը կնվազի 2 անգամ:

«Ամուսնական զույգը պետք է գիտակցի, որ անհրաժեշտ է ունենալ նվազագույնը 2 երեխա, որպեսզի լինի պարզ վերարտադրություն, սակայն բոլորս պետք է փոխենք մեր վարքագիծը՝ ունենալով 3 եւ ավելի երեխաներ, որպեսզի լինի ընդլայնված վերարտադրություն», նշեց Գայանե Ավագյանը:

Վերարտադրողական խնդիրները, սակայն, չեն կարող լուծվել միայն բարի ցանկություններով. նախ անպտղության կամ ամլության դեմ իրականացվող բուժումներն ամենեւին էլ մատչելի չեն, եւ նրանք, ովքեր չունեն բուժվելու խնդիր, ներկայիս սոցիալական վատ պայմանների պատճառով խուսափում են 1-2 երեխայից ավելի երեխաներ ունենալ:

«Մեզնից անգամ ավելի աղքատ երկրներում առավել շատ են լինում ծննդաբերությունները: Ազգաբնակչության աճով 229 պետությունների մեջ այսօր Հայաստանը 205-րդ տեղում է: Սա արդեն մենթալիտետի հարց է դառնում», ասաց Էդուարդ Համբարձումյանը:

«Ազգի» հարցին, թե անպտղության դեպքերի քանի՞ տոկոսն է բուժելի, իսկ քանի՞ տոկոսը՝ ոչ, Գ. Ավագյանը պատասխանեց. «Մենք կարող ենք անդրադառնալ ե՛ւ հարաբերական, ե՛ւ բացարձակ անպտղության խնդիրներին: Հարաբերական է կոչվում այն անպտղությունը, որը բժշկության զարգացման տվյալ փուլում լինում է բուժելի, իսկ բացարձակ է այն անպտղությունը, երբ աշխարհի ոչ մի երկրում բժշկությունն ի վիճակի չէ բնական ճանապարհով ապահովելու վերարտադրություն: Բարեբախտաբար, բացարձակ անպտղության դեպքերը փոքր տոկոս են կազմում»:

Ունենալով բարդույթներ՝ տղամարդիկ խուսափում են բժիշկներից, եւ հաճախ տղամարդկանց բարդույթների ու «սկզբունքների» պատճառով զույգերը երեխաներ չեն ունենում:

«Հայ տղամարդիկ դեռ մնում են իրենց բարդույթներով, սակայն, կարծում եմ, այդ խնդիրը հետզհետե կհաղթահարվի: Վերջերս տղամարդիկ սկսել են բժշկի ավելի շատ դիմել: Առաջ միայն կանայք էին դիմում, գալիս էին սկեսուրների հետ, հիմա արդեն սկսել են դիմել ամուսնական զույգերը»,- ասաց Է. Համբարձումյանը,- «արդեն կա ինքնագիտակցության մակարդակի բարձրացում, եւ մենք ինչքան շուտ հայտնաբերենք խնդիրները, այնքան հեշտ կլինեն բուժման ձեւերը»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՖՈՐՈՒՄ

# Բիզնեսի եւ տեխնոլոգիաների երկխոսություն՝ DigiTec բիզնես ֆորումում

Հունիսի 9-10-ին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում կանցկացվի ամենամյա DigiTec բիզնես ֆորումը: Այն անցկացվում է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) կողմից: Ֆորումի նպատակն է աջակցել տեղեկատվական եւ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրմանը տնտեսության այլ ոլորտներում, մեկ տանիքի տակ ներկայացնել ՏՀՏ բոլոր այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք նախատեսված են տնտեսության արդիականացման, բիզնես գործընթացների ավտոմատացման եւ բիզնեսի առօրյա խնդիրների լուծման համար:

Ինչպես նշեց Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության միջոցառումների կազմակերպիչ Լեւոն Պետրոսյանը, DigiTec բիզնես ֆորումը կանցնի «Բիզնեսի եւ տեխնոլոգիաների երկխոսություն» նշանաբանի ներքո: Ֆորումի շրջանակներում նախատեսված են DigiTec բիզնես ցուցահանդես, տեխնոլոգիական սեմինարներ եւ թեմատիկ կլոր սեղաններ: Բացի այդ, մասնակիցները հնարավորություն կունենան գործնական միջավայրում շփվելու Հայաստանի առաջատար գործարար շրջանակների ավելի քան 1500 ղեկավարների հետ: Միջոցառման հրավեր են ստացել բիզնեսի տարբեր ոլորտների շուրջ 7600 գործարարներ, կազմակերպությունների ղեկավարներ, ՏՀՏ պատասխանատուներ, ինչպես նաեւ պետական գերատեսչությունների ղեկավարներ:




Կազմակերպիչները նշում են, որ ավանդական դարձած ֆորումում որակական որոշակի առաջընթաց կա: Այս տարի DigiTec բիզնես ֆորումին կարելի է տալ միջազգային կարգավիճակ, քանի որ մասնակցության ցանկություն են հայտնել արտասահմանյան որոշ ընկերություններ (դրանք մասնավորապես բալկանյան կազմակերպություններ են): Ենթադրվում է ֆորումի մի ամբողջ սեգմենտը կտրամադրվի այդ ընկերություններին: Բացի այդ, միջազգային մի ընկերություն՝ «Cyberoam», որ Հայաստանում ունի ներկայացուցչություն («Ապագա թեքնոլոջիս»), ստանձնել է ֆորումի հովանավորումը: **Լեւոն Պետրոսյանը** նշեց նաեւ, որ միջազգային այդ ընկերությունների հետ կա նախնական պայմանավորվածություն, որ հայկական ընկերություններն էլ կմասնակցեն տվյալ երկրներում անցկացվող միջոցառումներին:

Ակնկալվում է, որ ֆորումի նկատմամբ հետաքրքրությունն էլ ավելի կմեծանա. եթե անցյալ տարի արձանագրվել էր 1200-1300 մասնակից, ապա այս տարի ակնկալվում է ավելի քան 1500: Մասնակցությունը վճարովի է, որպեսզի ուղղորդվի այցելուների թիրախայնությունը: «Մասնակցության վճարը խորհրդանշական է: Սա փակ միջոցառում է այն մարդկանց համար, ովքեր կարիք ունեն իրենց բիզնեսում ՏՀՏ կիրառության», նշեց ԻՏՁՄ ներկայացուցիչը: Ընդ որում, DigiTec բիզնես ֆորումին տարեցտարի ավելացող այցելուների ու մասնակիցների թիվը վկայում է ֆորումի արդյունավետության եւ այն մասին, որ մարդիկ իրոք գիտակցում են, որ տեղեկատվական եւ հեռահաղորդակցական տեխնոլոգիաներն այսօր բիզնեսի անբաժանելի մասնիկն են:

Այս տարի առավել մեծ ուշադրություն է դարձվելու բանկային լուծումներին: Այս ուղղությամբ նույնպես ակնկալվում է միջազգային մասնակցություն. նախնական հետաքրքրություն է ցուցաբերել ռուսաստանյան մի ընկերություն:

Լ. Պետրոսյանը նկատեց նաեւ, որ հետճգնաժամային այս ժամանակներում գործարարների եւ կառավարման ոլորտի ներկայացուցիչների հետաքրքրությունն ավելի է մեծացել, քանի որ հասկանում են, որ նման միջոցառումները դժվարին իրավիճակներից դուրս գալու ելքերից մեկն են:

Ֆորումի ընթացքում նախատեսված է ցուցահանդես, որտեղ բիզնեսի ավտոմատացման իրենց լուծումները կներկայացնեն ՏՀՏ մի շարք ընկերություններ, որոնք ծառայություն են մատուցում տնտեսության արմենատարբեր ոլորտներում: Ֆորումին կհրավիրվեն նաեւ խորհրդատուներ, ովքեր կպատասխանեն գործարարների՝ տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում օգտագործելու վերաբերյալ յուրաքանչյուր հարցի:

# Թրաֆիկինգի զոհ են դառնում...

1-ին էջից

Թեպետ դատավճիռների առկայությունը գոհացնում է իրավաբանին, սակայն նշեց, որ քրեական օրենսդրությունում առաջիկայում փոփոխություններ կկատարվեն եւ կխստացվեն պատիժները:

2009 թվականին Հայաստանում թրաֆիկինգի 60 զոհ է հայտնաբերվել, հարուցվել է 12 դատական գործ, 8-ի վերաբերյալ կան դատավճիռներ: Մեղավորները պատժվել են 3-13 տարով:

ԵԱՀԿ գրասենյակի ներկայացուցիչ **Օվսաննա Բաբայանը** նկատում է, որ վերջին տարիներին նկատելիորեն աճել է հասարակության իրազեկությունը թրաֆիկինգ երեւույթից: Եթե մի քանի տարի առաջ թրաֆիկինգ ասելով հասկանում էին միայն սեռական շահագործում, ապա այժմ հարկադիր աշխատանքը եւս երեւույթի դրսեւորումներից մեկն է համարվում: «Նախկինում թրաֆիկինգ երեւույթը շաղկապվում էր Արաբական Միացյալ Էմիրությունների հետ, այժմ վտանգը կա նաեւ Ռուսաստանում, Թուրքիայում, բոլոր այն երկրներում, ուր աշխատանքային օրենսդրությունը ձեւավորված չէ եւ առկա է հարկադիր աշխատանքի վտանգը», ասաց Օվսաննա Բաբայանը:

Թրաֆիկինգի բացահայտված դեպքերը բնավ էլ չեն ներկայացնում երեւույթի իրական ծավալները: **Դավիթ Թումասյանն** ընդգծում է, որ թրաֆիկինգի ենթարկված զոհերի քանակն իրականում ավելին է: «Թրաֆիկինգը թաքնված հանցագործություն է, եւ բացահայտման համար կարեւոր է նաեւ զոհի դերը: Մարդիկ հաճախ հրաժարվում են հայտնել այդ մասին՝ վախենալով հարազատների եւ հասարակության պարսավանքից», ասաց Դավիթ Թումասյանը:

Գրեթե բոլոր դեպքերում թրաֆիկինգի զոհ են դառնում բոլոր նրանք, ովքեր սոցիալապես անապահով են, կրթական ցածր ցենզով, զուրկ կենցաղային նորմալ պայմաններից: Խոցելի խմբում գերակշիռ մեծամասնությունը երեխաներն են եւ կանայք, հիմնականում միայնակ մայրերը:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# Հայաստանում կներդրվի էներգետիկ անվտանգության ժամանակակից համակարգ

Էներգետիկ անվտանգության հայեցակարգի մշակման աշխատանքային խումբը մայիսի 6-ին գումարել է անդրանիկ նիստը, որը վարել է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանը**:

Կարեւորելով էներգետիկ անվտանգությունը՝ որպես մեր երկրի ազգային անվտանգության բաղկացուցիչներից մեկը, Արթուր Բաղդասարյանը նշել է, որ էներգետիկ անվտանգության հայեցակարգի հիմնական խնդիրը պետք է լինի Հայաստանի էներգետիկ ինքնաբավության մակարդակի ապահովումը թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում:

«Այսօր մեր երկրում էներգետիկայի զարգացման խնդիրները հուսալի վիճակում են, եւ Հայաստանը բոլոր հիմքերն ունի ոչ միայն ապահովելու մեր երկրի էներգետիկ ինքնաբավությունը, այլեւ էլեկտրաէներգիա արտահանելու, ինչը մեր երկրի տնտեսության համար չափազանց կարեւոր նշանակություն ունի: Եվրոպական երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այսօր երկու ուղղությամբ է զարգանում՝ էներգետիկայի զարգացման ռազմավարական ծրագրերի եւ էլեկտրաէներգիայի արտադրության խնայողության արդյունավետ ռեժիմների սահմանման միջոցով: Մենք պետք է կարողանանք միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելով՝ մեր երկրում ներդնել էներգետիկ անվտանգության ժամանակակից համակարգ», ասել է Արթուր Բաղդասարյանը:

Նիստում որոշվել է մեկ ամսվա ընթացքում ավարտել փաստաթղթի հայեցակարգային դրույթների մշակումը եւ մինչեւ հոկտեմբեր փաստաթուղթը ներկայացնել հաստատման:

*Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 06/05/2010 21:17 Page 1



# Տեղական ընտրությունների վրացական բանաձեւը

## Վրաց Պտենա գյուղը (շուրջ 200 ընտրող) եւ հայաբնակ Ախալքալաքը (շուրջ 7000) ընտրում են մեկական ներկայացուցչի

Այս տարվա մայիսի 30-ին Վրաստանում տեղական ընտրություններ են լինելու: «Վրացական իշխանությունները իրենց ձեռնարկած մի շարք քայլերով արդեն իսկ էապես դժվարացրել են դրանցում ջավախահայության իրավունքները պաշտպանող տեղական ուժերի մասնակցությունը», սպասվող ընտրությունների առնչությամբ իր մտահոգությունն է հայտնել Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը:

Ըստ խորհրդի տարածած հայտարարության, մասնավորապես, վրացական իշխանությունները պահպանել են տարածաշրջանային կամ տարածքային հատկանիշով կուսակցությունների ստեղծման վրա դրված արգելքը, որի հիմքով ժամանակին մերժվել է նաեւ ջավախքյան «Վիրք» կուսակցության հիմնադրումը, ինչը մարդու եւ ազգային փոքրամասնությունների իրավունքների կոպիտ խախտում է: Սա կարեւոր է այն ընդգծմամբ, որ Վրաստանում տեղական այս ընտրություններում առաջադրվելու իրավունք ունեն միայն քաղաքական միավորումներն ու ընտրական դաշինքները:

«Հակառակ Եվրոխորհրդի խորհրդակցական կոմիտեի հանձնարարականներին վրացական իշխանությունները շարունակում են պահպանել Ջավախքի ընտրատարածքների անհամամասնական կառուցվածքը», նշվում է հայտարարության մեջ, ընդգծելով, որ, օրինակ, Ախալքալաքի շրջանի յոթ վրացական գյուղերը կազմում են հինգ մեծամասնական ընտրատարածք, երբ մնացած տասնյոթ ընտրատարածքները բաժին են ընկնում հայ բնակչություն ունեցող հիսունութ բնակավայրերին: Արդյունքում, 96% հայ բնակչություն ունեցող Ախալքալաքի շրջանում վրացաբնակ Պտենա գյուղը (շուրջ 200 ընտրող) եւ հայաբնակ Ախալքալաք քաղաքը (շուրջ 7000 ընտրող) ՏԻՄ կազմում ընտրում են մեկական ներկայացուցչի:

Խորհուրդը շեշտում է. «Վերոնշյալ փաստերը հիմք են տալիս արձանագրելու, որ վրացական իշխանությունները ընտրական գործընթացի մեկնարկին արդեն իսկ թույլ են տվել մարդու եւ ազգային փոքրամասնությունների պաշտպանության միջազգային նորմերով երաշխավորված ջավախահայության քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների մի շարք խախտումներ կոպտորեն ոտնահարելով, մասնավորապես, ընտրական իրավունքի հավասարության, միություններ կազմելու եւ միությունների մեջ ընդգրկվելու, երկրի քաղաքական-հասարակական կյանքին արդյունավետ մասնակցելու իրավունքը»:

Ջավախահայության իրավունքների ոտնահարման ամենաակնառու երեւույթը վրացական ուժային կառույցների կողմից Ջավախքի հասարակական կյանքի բոլոր ոլորտների վերահսկողության հաստատումն է: «Դրա անմիջական եւ խիստ մտահոգիչ հետեւանքն է նաեւ այն փաստը, որ ջավախքյան ընտրություններին միջամտում են տեղական ուժային կառույցները: Արդեն իսկ արձանագրվել են ընդդիմադիր ցուցակներով առաջադրված ջավախքյան թեկնածուների նկատմամբ ճնշում գործադրելու փորձեր», արձանագրում է խորհուրդը:

Հայտարարության մեջ կոչ է արվում Վրաստանում ՏԻՄ ընտրությունների դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպություններին, մասնավորապես ԵԱՀԿ դիտորդական առաքելությանը, համապատասխան գնահատական տալ վերոնշյալ փաստերին եւ վրացական իշխանությունների վրա ճնշում գործադրելու միջոցով նպաստել հայ բնակչության քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների ոտնահարման քաղաքականության վերացմանը: Կոչը ուղեկցվում է հույսով, թե «վրացական իշխանությունները կառաջնորդվեն իրենց հռչակած ժողովրդավարական սկզբունքներով եւ Ջավախքում կապահովեն արդար եւ թափանցիկ ընտրությունների անցկացումը»:

Ուր էր, թե այդպես լիներ:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**




# «Հայաստանի հետ մեր հարաբերությունները ավելի լավ վիճակում են, քան մեկ տարի առաջ»

*1-ին էջից*

Զրույցի ժամանակ Դավութօղլուն միաժամանակ ակնարկել է, որ հայկական կողմի հետ արձանագրությունների ստորագրման համար ծավալվող բանակցություններում թուրքական կողմը բարձրացրել է, Ղարաբաղը ներառյալ, օկուպացված տարածքներին եւ 1915-ի իրադարձություններին առնչվող հարցեր: Որոշ պարզաբանումներ է տվել, չգրելու պայմանով, Աքյոլին, հիշեցրել է դիվանագիտության մեջ կիրառվող «փակ կառուցողականության» մեթոդի մասին:

Այնուհետեւ Դավութօղլուն ուրվագծել է ՀՀ նախագահի հայտարարության հնարավոր հետեւանքների համայնապատկերը, որի մասին Աքյոլը գրում է. «Ադրբեջանն անհանգստացած էր, մտածելով, արդյո՞ք ապրիլի 24-ն անփորձանք անցկացնելու համար Թուրքիան ծախեց ղարաբաղյան հիմնահարցում: Հայաստանը հույս ուներ, որ արձանագրությունների վավերացման ընթացակարգի կասեցումը կմտահոգի Թուրքիային, որպեսզի Օբաման չարտասանի «ցեղասպանություն» բառը ապրիլի 24-ին, նա իսկույն խորհրդարանում արձանագրությունները կվավերացնի, ընդ որում՝ առանց Ղարաբաղի հիմնահարցի կարգավորմանն ուղղված ընդառաջ քայլի կատարմանը, իսկ արձանագրությունները չվավերացնելու դեպքում էլ կարվեն ԱՄՆ-ի հետ Թուրքիայի հարաբերությունները: Ոչ մի կանխատեսում չիրականացավ, եւ Դավութօղլուն իրավացիորեն ասաց, որ ապրիլի 24-ը լավ ենք անցկացրել, իսկ Ադրբեջանի հետ բոլոր ասպարեզներում փոխվստահությունը լիարժեք է»:

Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուի ասածները «Միլլիեթի» հեղինակ Աքյոլին որքա՞ն են արտացոլում իրականությունը, չգիտենք: Բայց որ ՀՀ նախագահը հայ-թուրքական արձանագրությունների ընթացակարգը կասեցնելուց առաջ արձանագրությունների առնչությամբ հանդիպումներ է ունեցել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի նախագահների հետ, իսկ այս երկրները շահագրգիռ են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման հարցում, ակնհայտ է:

# Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի հարցին վերջնական լուծում կտրվի

**31 մլն 650 հազար դրամ է երեկ կառավարությունը հատկացրել Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանի ծածկի, ջրահեռացման համակարգի եւ ցանկապատի վերականգնման համար: Բացի դրանից, վարչապետ Տիգրան Սարգսյանը հանձնարարեց արտակարգ իրավիճակների, բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարություններին պատրաստել համատեղ որոշում, որով վերջնական լուծում կտրվի թունաքիմիկատների ոչնչացման գործընթացին: Այդ նպատակով արտակարգ իրավիճակների նախարարությունը բանակցություններ է սկսել միջազգային կազմակերպությունների եւ դոնոր երկրների հետ՝ ֆինանսավորելու թունաքիմիկատների ոչնչացումը:**

**Ա. Մ.**

# Արատավոր շրջան

*1-ին էջից*

**Մեր իշխող կուսակցությունները դարձել են պաշտոնյաներով, օրենսդիրներով եւ գործարարներով հագեցած ինչ-որ չինովնիկական կառույցներ, որոնք հասարակությանը փոխելու, նրա կյանքը բարելավելու որեւէ կենսունակ ծրագիր ի վիճակի չեն առաջադրելու, այլ միայն սպասում են վերեւներից հրահանգների, գնում միայն գործադիրի հետեւից: ՕԵԿ-ի, ԲՀԿ-ի մասով խոսակցությունը մի փոքր գուցե տարբեր է, բայց արդյունքի առումով էլ նույնը կարելի է արձանագրել՝ Հայաստանում այդպես էլ քաղաքական կուսակցությունները չեն դառնում գաղափարական միավորներ, որոնց խնդիրն է պետության զարգացման այլընտրանքային ճանապարհների կամ ծրագրերի առաջարկումը: Լեւոն Տեր-Պետրոսյանից սկսած՝ Հայաստանի նախագահները վախենում են կուսակցական ինքնամաքրվող եւ կենսունակ կառույցների կայացումից, դրանք երեւի համարելով ստույգ վտանգ բրգային իշխանության համար: Եվ անգամ հետեւելով Սերժ Սարգսյանի գործելակերպին՝ կարելի է նկատել, որ այս կարծրատիպը հատուկ է նաեւ նրան՝ նրան եւս հարկավոր է ենթարկվող, կենտրոնացված, մոնոլիտ, ներքեւից վերեւ հստակ ենթակայությամբ կառույց, ինչը արդիական կենսունակ կուսակցության նկարագրի հետ ոչ մի կապ չունի: Չի կարող պետություն զարգանալ, եթե նրա կուսակցական կառույցները չեն արդիականանում, հեղափոխական թարմ գաղափարներ առաջ չեն քաշում, չեն պատրաստում կառավարողներին եւ կուսակցություններին գաղափարական (չշփոթել ֆունկցիոներության հետ) փոխարինողների նոր սերունդ (խոսքը տաղանդով եւ շնորհներով օժտված երիտասարդ մարդկանց ճանապարհ տալու մասին է եւ ոչ թե «սվոյ» մարդկանց բալաներին կուսակցական կրծքանշանի նվիրում): Հո պատահական չէր երեկ ԼՂՀ նախկին արտգործնախարար Արման Մելիքյանն ասում, թե Կոնգրեսը հայ-թուրքական հարցում այլընտրանքային լուծումներ առաջարկելու փոխարեն միայն պնդում է իշխանափոխության մասին. միտքը թարմ է ժամանակային առումով՝ դրա համար էլ ուղիղ իր տեղը դրեցինք, իսկ այդ թերությունը քաղաքական դաշտի բոլոր հատվածներին է վերաբերում: Ահա այսպես մեր երեք նախագահներն էլ դուրս չեն եկել հայոց քաղաքական չկայացած կյանքի տրամաբանությունից, եւ ակամա կամ նույնիսկ հենց հատուկ փորձել են ճնշել բոլոր ուժեղացողներին ու միտք հուշողներին՝ սպառնալիք համարելով նրանց սեփական իշխանությանը:**

**Արդյունքում հայոց քաղաքական դաշտը ինչպես ամայացվում էր առաջին երկու նախագահների օրոք, այնպես էլ հիմա զարգացում չի ապրում, որովհետեւ անձամբ ես կուսակցությունների մեծ մասը համարում եմ ձեւական, ինչ-որ տեղ, իսկ որ ավելի վատ է՝ ինչ-որ մեկի ապարատամենտում գծած ու պլանավորված, հաճախ մեկ անձի շուրջը ստեղծված, սեփական կենսատարածքը պահպանելու միտված միավորներ, որոնք «կուսակցություն» բառի բուն իմաստի հետ քաղաքագիտական առումով քիչ ընդհանուր բան ունեն: Օրինակով ասենք. սովորաբար ավագ տարիքի գիտնականները, գրողները, արվեստագետները միշտ մտահոգ են շարունակողներ ստեղծելու հարցով, այլապես իրենցից հետո կընդհատվի շղթան եւ իրենց ստեղծածը մյուս սերնդին փոխանցող չի լինի: Բայց Հայաստանում քաղաքական կյանքը բոլորովին այլ ուղիով է գնացել, եւ հիմա վայելում ենք մեր ստեղծած ավերի հետքերը: Մի պահ պատկերացնենք, որ վաղը ընտրություններ են, ու մի հրաշքով քաղաքական կամք ենք որդեգրում, որ «մեյդան» չենք բերելու ընտրակաշառքը, թաղային հեղինակություններին, վերեւից իջեցված հրահանգը եւ թույլ ենք տալիս մարդկանց՝ բառիս բուն իմաստով ընտրել սեփական հայեցողությամբ: Ո՞ւմ կընտրի ժողովուրդը, ի՞նչ եք կարծում:**

**Այո, ճիշտ եք Ձեր մտքերի հոսքում՝ իշխող կուսակցությունները հազիվ թե քվե տանեն (քիչումիչ տարբերություններով), արմատական ընդդիմությունը՝ նույնպես, տանք բոլորն էլ հազիվ թե հինգ տոկոսանոց արգելապատնեշով մագլցեն, նույնը տեղի կունենա «Ժառանգության» հետ, որի մի քանի լիդերներին եթե հանես՝ մնացյալի դիմաց անհայտի նշան կարելի է դնել, իսկ Դաշնակցությունը իր ավանդական ընտրազանգվածի ծիրում կմնա: Այդ նրանից է, որ մեր կուսակցությունները, որպես այդպիսին, հիմնականում գոյություն չունեն, ավելի շատ արհեստականորեն, տարբեր նպատակներով ստեղծված կառույցներ են. մեկը ստեղծվել է, որ իշխանությունը կարողանա օգտագործել նրան որպես թռիչքահրապարակ՝ սեփական «թայֆայի» մարդկանց մշտապես իշխանություն հրելու համար, ընդ որում՝ տարբեր իշխանությունների օրոք դրանք ստեղծվում էին միեւնույն սցենարով. մի հրահանգով գրասենյակներ են ստեղծվում, փող է պտտեցվում, բոլոր բնակավայրերում հավաքագրվում են հավատարիմ մարդիկ, դնում-գծում են մի քանի ամիս հետոյի ընտրություններում հաղթողների քարտեզը՝ նախ կուսակցություն-կուսակցություն, հետո արդեն՝ ցուցակ-ցուցակ, ցուցակի անցողիկ տեղերի համար գներ սահմանում կողմնակիցների (բայց հարուստներ) համար եւ այլն:**

**Այսպիսի իրականությունն արդեն երկրորդ տասնամյակն է՝ փակում է՛ւ հասարակության, է՛ւ, եթե կուզեք, երկրի զարգացման ճանապարհը, որովհետեւ հո չի՞ կարելի այդպիսի համակարգով նորմալ խորհրդարան ունենալ: Բայց այդ էլ դեռ ոչինչ՝ տասնամյակներով սերունդ սերնդի վրա կոտրելով՝ մտայնություն ու նկարագիր փոխեցինք (դեպի անհուսալին): Հիմա որ մի խումբ մարդիկ հավաքվել ու ուզում են կարգախոսներով փիլիսոփայություն փոխել, դա նվազագույնը ժպիտ է առաջացնում: Հիմնովին ավերված բնակարանը կամ միանգամից են նորոգում, կամ, եթե միջոց չունեն, կամաց-կամաց, քառակուսի մետր առ քառակուսի մետր: Նորոգողն էլ նույն մարդիկ չպետք է լինեն, ովքեր կրում են ավերումի փիլիսոփայությունը կամ առնվազն ծառայել են դրան: «Ինչպե՞սը» չգիտենք, պիտի գտնվի տքնանքով: Գիտենք, որ բրգաձեւ կուսակցական կառուցվածքները սպառել են իրենց:**

**Գիտենք, որ այս կուսակցական կառույցներն ինքնաբավ են ու ոչ մի ուրիշ բանի չեն ծառայում, բացի սեփական կուսակցական շահից եւ անձերի բարեկեցությունից: Գիտենք, որ ՀՀԿ-ի արդիականացման մասին Ս. Սարգսյանի խոստումն իրականություն չի դարձել: Գիտենք, որ մեր կուսակցություններն ամենաբյուրոկրատական կառույցներն են, որոնք սովորական մարդու ոչ մի խնդիր չեն կարող եւ չեն ուզում սկզբունքորեն ճիշտ հայեցակետից լուծել, երկրի համար ծրագիր չեն ուզում առաջակել, եւ մտքի ծայրով էլ որ անցկացնեն անգամ՝ առանց հրահանգի նախաձեռնություն չեն իրականացնի:**

**Հիմա որ լսում եմ, թե ինչ-որ կուսակցություն ամրացնում է իր տեղական կառույցները, կամ նոր մարդիկ ներմուծելով՝ փորձում է նորոգել կերպարը, առաջին բանը որ անցնում է մարդու մտքով, դա այն է, որ դա հիմնականում իշխանության տարբեր թեւերից եկող հրահանգների արդյունքում է, եւ դրանից հետո էլ մտածում ես, որ Հայաստանի քաղաքական կյանքը դեռ մի հարյուր տարի էլ չի գնա այն հուն, որից պետք է սկսվի երկրի ու հասարակության զարգացումը: Գիտեմ, որ նոր ստեղծվող կուսակցական այն միավորները, որոնց մտքին իսկապես զարգացումն է, տորպեդահարվելու են կարծրացած մեր բարքերի կրողներից: Իսկ արդեն մեկուկես տասնամյակ տեւող այն խոսակցությունը, թե Լեւոնին հանենք՝ ամեն ինչ տեղը կընկնի, Ռոբերտին հանենք՝ կյանքը կլավանա, կամ Սերժին հանենք՝ ամեն ինչ տեղը կընկնի, բացարձակապես անլուրջ խոսակցություն է, որն ըմբռնելով կամ առանց ըմբռնելու կրկնում են ուղղորդողների միջին շերտերը: Բայց գոնե վերին շերտերը հասկանում են, որ այդպես երկիրն ենք կործանում, նաեւ՝ իրենց երկիրը, բայց տարբեր պատճառներով չեն կարողանում կամ չեն ուզում դուրս գալ արատավոր շրջանից:**

AZG NEW PDF.qxd 06/05/2010 21:17 Page 1



## 65-ամյակ

# Ամերիկահայերի մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին

Երկրորդ աշխարհամարտի տարիներին (1939-1945 թթ.) պատմական ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված հայությունը, առաջադեմ մյուս ժողովուրդների հետ կողք կողքի, անմնացորդ մարտնչել է ընդդեմ ֆաշիզմի, ընդդեմ բռնության՝ իր զգալի ավանդը ներդնելով հաղթանակի նվաճման գործում:* Նրանց շարքում իրենց առանձնահատուկ տեղն ունեն ամերիկահայերը:

ԱՄՆ-ի 10 միլիոնանոց բանակի բոլոր զորատեսակներում, բոլոր ռազմական գործողություններում (ասիական-խաղաղօվկիանոսյան, եվրոպական-աֆրիկյան-միջինարեւելյան, օտար ռազմաջոկատներ) ծառայել են ավելի քան 20.000 ամերիկահայեր (1940 թ. ԱՄՆ-ում կար ավելի քան 200.000 հայ):

Ամերիկահայ զինվորների մեծ մասը վերադարձել է հաղթանակով, սակայն քիչ չեն եղել նաեւ հերոսաբար զոհվածները (շուրջ 500 հոգի), վիրավորները (5000-ից ավելի) եւ անհայտ կորածները (մոտավորապես 50 հոգի):



Հայկ Շեքերջյան, ամերիկահայ առաջին գեներալը



Էռնեստ Դերվիշյան, ԱՄՆ-ի բարձրագույն պարգեւին արժանացած ամերիկահայը



Վարդան Աղաբաբյան, ամերիկահայ հերոսների նախակարապետը

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Միացյալ Նահանգների ամենաբարձր կոչում ունեցող հայազգի զինվորականը գեներալ **Հայկ Շեքերջյանն** էր, որը 1942 թ. այդ կոչմանն էր արժանացել նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի կողմից: Դեռեւս երիտասարդ հասակում դրսեւորած քաղաքացիական բացառիկ խիզախության համար (նա տասնվեց տարեկան էր, երբ քաջաբար նետվել է սաստիկ հրդեհվող տան մեջ՝ փրկելով մի կնոջ ու նրա երեխային) ԱՄՆ-ի Ուեսթ-Փոյնթի ռազմական ակադեմիա ընդունված եւ ուսանած առաջին հայազգի զինվորականն էր, որը, հաջողությունների հասնելով, Առաջին աշխարհամարտից հետո ծառայել է Անտանտի զորքերի կազմում:

Ամերիկահայ բարձրաստիճան զինվորականների շարքում իրենց խիզախությամբ փայլել են նաեւ ամերիկյան բանակի հրամանատար **Ջեք (Սիրակ) Նահիկյանը**, գնդապետներ՝ **Քըրք Բուչախը, Սարգիս Զարդարյանը** եւ այլք:

Միացյալ Նահանգների բացառիկ եւ ամենաբարձր պարգեւին՝ Կոնգրեսի Պատվո շքանշանին (որով ամերիկյան բանակից պարգեւատրվել էր ընդամենը 87 մարդ) արժանացել էր ամերիկյան հերոս, ավագ լեյտենանտ **Էռնեստ Հ. Դերվիշյանն** իր անօրինակ եւ գրեթե առասպելական խիզախության համար, որ նա ցուցաբերել էր 1944 թ. մայիսին՝ իտալական Սիստեռնա վայրում: Կատաղի ընդհարման ժամանակ կորցնելով իր մարտական ընկերներին եւ մեն-մենակ հայտնվելով թշնամական շրջափակման մեջ՝ նա կարողացել էր ռազմական արվեստի իր աներեւակայելի հնարքներով գերել հակառակորդի միանգամից 45 զինվոր, խլել 3 գնդացիր եւ 10 ատրճանակ: Պատերազմից հետո գնդապետի աստիճանով զորացրված է. Դերվիշյանը զբաղեցրել է ռազմական բարձր պաշտոններ. եղել է Ամերիկյան ազգային լեգեոնի փոխհրամանատար, ռազմական ու պետական տարբեր հարցերով խորհրդական:



Ջեյմս Թոփալյան, ամերիկահայ առաջին զոհը



Հարրի Դաղլյան, ամերիկահայ աստղագետ



Վիկտոր Մաղաքյան, ԱՄՆ-ի երկրորդ կարգի պարգեւին արժանացած ամերիկահայը

Հետեւակային ծառայության մեջ դրսեւորած անհատական հերոսության համար երկրի երկրորդ բարձրագույն պարգեւին՝ Առանձնահատուկ ծառայության խաչ շքանշանին արժանացել է շարքի սերժանտ **Հենրի Կալփակյանը** (հետմահու), ծովային ծառայության մեջ՝ փոխհրամանատար **Կեդրիկ Ջանյանը**, գնդապետ **Հարրի Կիզիրյանը** եւ առաջին կարգի լեյտենանտ **Վիկտոր Մաղաքյանը**: Խիզախության համար Արծաթե աստղ բարձր շքանշանով պարգեւատրվել են 52 ամերիկահայեր, որոնցից 5-ը՝ հետմահու: Անգնահատելի նվիրվածության եւ օրինակելի ծառայության համար Երախտիքի լեգեոն շքանշանի են արժանացել գնդապետ **Քըրք Բուչախը**, փոխգնդապետ **Արամ Թութելյանը**: Օդաչուի սխրանքի համար բարձր պարգեւի՝ Առանձնահատուկ օդանավորդության խաչ շքանշանի արժանացել են 44 ամերիկահայեր, որոնցից 2-ը՝ հետմահու: Անձնական խիզախության եւ պատերազմական դժվարին հանգամանքներում օգնության հասնելու համար սահմանված Զինվորական շքանշանով պարգեւատրվել են 11 ամերիկահայեր, որոնցից 1-ը հետմահու:

Ամերիկահայ հերոսների նախակարապետը ծնունդով վանեցի, առաջին կարգի շարքային **Վարդան Աղաբաբյանն** էր Սփրինգֆիլդից, որը պարգեւատրվել էր ամերիկյան ռազմական բարձրագույն երկու շքանշաններով: Նա մասնակցել էր Առաջին եւ Երկրորդ աշխարհամարտերին, վիրավորվել 14 անգամ:

1941 թ. դեկտեմբերի 7-ին Խաղաղ օվկիանոսում ամերիկյան 86 ռազմանավերի նկատմամբ Ճապոնիայի իրականացրած հարյուրից ավելի ռմբահարումների ժամանակ՝ Փիրլ-Հարբորում իր զինվորական պարտքը կատարելիս զոհվել է առաջին ամերիկահայ զինծառայողը՝ կրտսեր ենթասպա **Ջեյմս Թոփալյանը** (պատերազմի ավարտից հետո Բոստոնի փողոցներից մեկը կոչվել է նրա անունով):

Բազմաթիվ ամերիկահայեր մասնակցել են 1945 թ. ապրիլի 27-ին Էլբա գետի վրա դաշնակից երկրների եւ ռուսական զինվորների հիշարժան հանդիպմանը, ընդգրկվել են ամերիկյան բարձրաստիճան հրամանատարությանը սպասարկող անձնակազմում՝ ծառայության բերումով ականատես դառնալով պատմական տարբեր կարեւոր իրադարձությունների: Ամերիկահայերն իրենց անմիջական մասնակցությունն են բերել նաեւ խաղաղության տարբեր բանակցությունների նախապատրաստական եւ ընթացիկ աշխատանքներին, տվել են նաեւ բազմաթիվ հետախույզներ:

Ամերիկահայ բազմաթիվ ընտանիքներ ռազմաճակատ են ուղարկել միանգամից մի քանի զավակներ. զինվորագրվածների թվում շատ են եղել եղբայրներ եւ քույրեր, երկվորյակներ եւ եռյակներ, ամուսիններ, հայրեր եւ որդիներ, ազգականներ: Ամերիկյան բանակի բոլոր ռազմատեսակներում ծառայել են նաեւ հարյուրավոր հայուհիներ, ընդ որում, ավելի քան քառասունը՝ ռազմածովային ուժերում, մյուսները՝ հետեւակում եւ ռազմաօդային ուժերում:

Ամերիկահայերն իրենց ուժերն ու մտավոր կարողությունները ներդրել են նաեւ «ներքին ճակատում»՝ ներգրավվելով ռազմամթերային, նավաշինարարական եւ ռազմական այլ արտադրություններում, ընդհուպ՝ ատոմային ռումբի ստեղծմանը: Երեսուներկուամյա աստղագետ դոկտոր **Հարրի Դաղլյանն** իր տաղանդի ծաղկման շրջանում, ատոմային ռումբի ստեղծմանը նախորդած փորձարկումների ժամանակ, պայթյունի զոհ է դարձել: Այս ասպարեզում իրենց դրսեւորել են նաեւ **Ջոն Օհանեսյանը, Սիմոն Էքիլյանը,** փոխհրամանատար **Արամ Փարունակը**: Ռազմական ասպարեզում իրենց գիտելիքներն են ծառայեցրել պատերազմական դեպարտամենտի հատուկ վկայագրով պարգեւատրված ավագ սերժանտ **Հերոլդ Շահնազարյանը**, ֆիզիկոսներ՝ մայոր **Զավեն Նալբանդյանը**, փոխգնդապետ **Կարլ Դոքմեջյանը**: Վերջինիս ստեղծած վառելիքային հզոր կործանիչ տանկը գործադրվել է Իտալիայի նվաճման ժամանակ:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին ամերիկահայերն անձնուրաց ծառայել են նաեւ ռազմական բժշկության ասպարեզում: Իսկ լոսանջելեսաբնակ վիրաբույժ փոխգնդապետ **Լեոն Աշճյանն** առանձնահատուկ էր Լոնդոնի ռազմական գլխավոր հիվանդանոցում իր իրականացրած բացառիկ պլաստիկ վիրահատություններով: Ամերիկյան բանակում իրենց անձնազոհությամբ ու հոգատարությամբ աչքի են ընկել հայազգի զինվորական բուժքույրերը, մասնակցել նաեւ աշխարհի տարբեր մայրցամաքներում Ամերիկյան կարմիր խաչի իրականացրած փրկարար աշխատանքներին:

Հայերի տաղանդով, քաջությամբ եւ նվիրվածությամբ հիացել ու հպարտացել են ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաներ, պետական ու ռազմական գործիչներ՝ արդարացի կերպով ընդգծելով ամերիկահայոց առանձնահատուկ տեղն ու դերը հաղթանակի նվաճման գործում: Անհատ քաղաքացիներից բացի, Երկրորդ աշխարհամարտում հաղթանակի նվաճման գործում իրենց անգնահատելի նպաստն են բերել նաեւ ամերիկահայ բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, հայրենակցական միություններ եւ կուսակցություններ:

Պատերազմի տարիներին հայրենասիրական մղումով ոտքի էին ելել ամերիկյան տարբեր քաղաքների հայկական կենտրոնները: Օրինակ՝ Նյու Յորքի Ամերիկահայերի կոմիտեն ամբողջ պատերազմի ընթացքում հանգանակել եւ ռազմական տեխնիկա գնելու նպատակով կառավարությանն էր տրամադրել մի քանի միլիոն դոլար, որով գնվել էին «Հայաստանի ոգի», «Արարատ» եւ այլ հայաշունչ անուններ կրող ինքնաթիռներ ու նավեր: Սան Ֆրանցիսկոյի հայերն իրենց հանգանակած միջոցներով Հայկական կոմիտեի անունից 1942 թ. օգոստոսին Ամերիկյան կարմիր խաչին են նվիրել «Մասիս» երկաթուղային կառաշարը, իսկ երկրի ռազմական կարիքների համար միայն 1943 թ.՝ 1 մլն դոլար: «Ֆրեզնոյի ամերիկահայ քաղաքացիների լիգայի» եւ անհատ հայ նվիրատուների ջանքերով 1942-1944 թթ. ընթացքում հավաքվել է շուրջ 8,5 մլն դոլար եւ այլն:

Ամերիկահայերը գործուն կերպով են արձագանքել նաեւ պատերազմի արժեթղթերի վաճառքի կառավարության կոչին՝ երկրի այլ ազգային ներկայացուցիչների համեմատությամբ գնելով մեծ քանակությամբ արժեթղթեր:

Ֆաշիզմի դեմ պայքարի ճակատագրական տարիներին ամերիկահայ տարբեր կուսակցությունները միասնականություն են դրսեւորել ոչ միայն իրենց քաղաքացիական պարտքի կատարման, այլեւ՝ հեռավոր հայրենիքին նյութապես եւ բարոյապես սատարելու գործում: Այդ մասին է վկայում 1941 թ. օգոստոսին Նյու Յորքում տեղի ունեցած զանգվածային հանրահավաքի ժամանակ ԽՍՀՄ կառավարությանն ուղղված ամերիկահայության հետեւյալ դիմումը. «Մենք, ամերիկահայերս, որոնց բնիկ երկիրը կը պաշտպանէ Կարմիր բանակը, կը զգանք, որ պարտաւոր ենք օգնելու Սովետ Միութեան, պայքարելու մինչեւ այն ատեն, երբ ամբողջ աշխարհի երեսէն կ'ոչնչացուի ֆաշիզմը»:

Պատերազմի ամենավճռական տարիներին աշխարհով մեկ սփռված հայությունը միավորվել է ազգային ճակատներում, որոնց գործուն կազմակերպություններից էր նաեւ 1944 թ. մարտի 19-ին Նյու Յորքում վերջնականապես ձեւավորված Ամերիկահայ ազգային խորհուրդը՝ ամերիկահայ տարբեր կազմակերպությունների միասնական ճակատը (բաղկացած ՌԱԿ, ՍԴՀԿ, Ամերիկահայ առաջադիմական միության, ՀԲԸՄ, հարանվանական եկեղեցիների, տարբեր հայրենակցական եւ այլ միությունների ներկայացուցիչներից), որը, երկրով մեկ տարածված իր բազմաթիվ մասնաճյուղերով, միջոցառումներ, հանգանակություններ ու նվիրատվություններ է կազմակերպել՝ ի նպաստ ամերիկյան եւ խորհրդային բանակների, Կարմիր խաչի եւ մայր հայրենիքի, իսկ պատերազմի ավարտից հետո (մինչեւ 1950 թ.) ձեռնամուխ է եղել նաեւ նորակազմ ՄԱԿ-ի շրջանակներում Հայ դատին արդարացի լուծում տալու խնդրին: Ամերիկահայ ազգային խորհրդի հայրենանվեր ջանքերով 1944 թ. գարնանը ֆաշիզմին հերոսաբար դիմագրաված ԽՍՀՄ ազատագրված տարածքների բնակչության համար ուղարկվել է 75 հազար դոլար արժողության 25 հազար նվեր-ծանրոց, Հայաստանի համար՝ մեկ նավ հագուստեղեն: Բացի այդ, Ռուսաստանի օգնության կոմիտեի միջոցով Կարմիր բանակի համար առաքվել է 50 հազար դոլար, ինչպես նաեւ 87 հազար դոլար արժողության դեղորայք: Խորհրդային Միության պատերազմական ջանքերին աջակցող Ամերիկահայկական կոմիտեն մինչեւ 1943 թ. հանգանակել է. Կարմիր բանակի համար շուրջ 56 հազար դոլար, կարիքավորների համար՝ 29 հազար դոլար, Հայաստանի համար՝ 11 հազար դոլար, ինչպես նաեւ 9 հազար դոլար արժողության 2.700 կտոր բրդյա գործվածքեղեն եւ այլն:

Ամերիկահայությունը, անմնացորդ օժանդակելով պատերազմից ուժասպառ Խորհրդային Միությանը եւ Հայաստանին, իր զգալի ներդրումն է ունեցել նաեւ Սփյուռքի առաջադեմ ուժերի կողմից «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծման գործում: Ամերիկահայության արագ եւ կազմակերպված ջանքերով 1943 թ. մարտից մինչեւ 1944 թ. մարտ այդ նպատակով ԱՄՆ-ում հանգանակվել է առնվազն 115 հազար դոլար՝ «Սասունցի Դավիթ» տանկային առաջին (նաեւ 173 հազար դոլար՝ Կարմիր խաչի հիմնադրամին), ապա՝ 40 հազար դոլար երկրորդ շարասյան կառուցման համար, որոնք, շատ կարճ ժամանակում շարք մտնելով, մասնակցել են խորհրդային երկրի ազատագրական հաղթարշավին: Իսկ 1945 թ. «Զորավար Բաղրամյան» տանկային նոր շարասյան կառուցման համար սկսված հանգանակությունը դադարել է Հայրենական մեծ պատերազմի ավարտի հետ: Ամերիկահայոց հոգեւոր առաջնորդ Գարեգին Ա արքեպիսկոպոս Հովսեփյանի (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս) ջանքերով կազմակերպված Հայկական հանձնախումբը մեկ տարվա ընթացքում ի նպաստ Կարմիր բանակի, մայր հայրենիքի եւ Սփյուռքի հայրենակիցների հանգանակել է 120 հազար դոլար, իսկ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան համար՝ 85 հազար դոլար:

Թուրքական ջարդարարության զոհ դարձած եւ հրաշքով վերապրած հայության զգալի մասի համար բնորոշ էր Հայոց ցեղասպանությունից վերապրած հայ կնոջ խոսքը ԱՄՆ-ի բանակում ծառայած իր որդու մասին, որը, Երկրորդ աշխարհամարտի տարիներին հերոսաբար մարտնչելով, հասել էր մինչեւ Բեռլին. «Զավակս վրէժն առաւ իր գերդաստանի այն անդամներուն, որոնք նախորդ պատերազմի ատեն գերմանացիներու մեղսակցությամբ եւ քաջալերությամբ սպանվեցան: Ան նաեւ վրէժ առաւ նախորդ պատերազմին ջարդված հարյուր հազարավոր հայերու»:

Ահա թե ինչու, կիսելով հաղթանակի նվաճման գործում ԱՄՆ-ին եւ մայր հայրենիքին բաժին ընկած դժվարությունները, ամերիկահայությունը, ողջ սփյուռքահայության հետ, Երկրորդ աշխարհամարտի հաղթանակի հետ է կապել նաեւ Հայ դատի վերանայման եւ պահանջատիրության հույսերը:

**ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ**
**Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող**

*(*) Այստեղ պետք է անել մի լուրջ վերապահում. ՀՅԴաշնակցության լիդերներից շատերը դիրքավորված են եղել ֆաշիստական ճամբարում: Խմբ.:*

# Ի՞նչ կատարվեց Ղրղզստանում

Թվում է՝ Ղրղզստանում իրադրությունը խաղաղվում է եւ ամեն ինչ պարզ է դառնում. ազատատենչ ու արդարամիտ ղրղզ ժողովուրդը «հերթական» անգամ դեն նետեց իշխանական ատելի լուծը (այս անգամ ի դեմս Բակիեւի) եւ դեմոկրատական (անշուշտ՝ միջինասիական թեքումով) մոլուցքով ձեռնամուխ եղավ նոր արդարացի պետության կազմավորմանը (երեւի մինչեւ նոր հեղափոխություն): Սակայն հազիվ թե իրականությանը մոտ է իրադարձությունների զարգացման այս գրեթե կոմունիստական սցենարը: Համենայն դեպս որոշ ռուս փորձագետներ, նկատի ունենալով բիշքեկյան ընդվզումները եւ հեռուն նայելով, կասկածի տակ են դնում առհասարակ ԱՊՀ երկրների սահմանների անխախտելիության պարագան:

Ակնհայտ է, որ Ղրղզստանում բախվեցին երեք խոշոր տերությունների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Չինաստանի շահերը: Առաջին տպավորությունն այն է, որ ռուսները ռեւանշ վերցրին եւ իրականացրին «իրենց» գունավոր թե անգույն հեղափոխությունը: Այդ դեպքում ինչո՞ւ է պասիվ Չինաստանը, որը Ղրղզստանը համարում է իր պատմական տարածքի մի մասը: Կամ, ասենք, ամերիկացիների համար պատվաբե՞ր է կարճ ժամանակամիջոցում թուլացնել իր դիրքերը ե՛ւ Ուկրաինայում, ե՛ւ Ղրղզստանում, գուցե ե՛ւ Վրաստանում: Ակնբախ է, որ սկսվել է գերտերությունների աշխարհաքաղաքական խաղերի ու նկրտումների նոր փուլ, որում Ռուսաստանը հանդես է գալիս «թարմացած» ուժով:

Ինքնին հասկանալի է, որ շահերի բախումների հենքերը շատ ավելի խորն են ու բազմաշերտ եւ իրենց շոշափուկներով կոնկրետ աշխարհաշրջանում հասնում են Աֆղանստան: «Աֆղանստանը, գրում է մոսկովյան թերթերից մեկը, ոչ միայն այն տարածքն է, որտեղ ՆԱՏՕ-ն անփառունակ մարտնչում է թալիբների դեմ, այլեւ այն ասպարեզը, որտեղ տեղի են ունենում անողոք եւ աներեւույթ բախումներ աշխարհի առնվազն տասը ազդեցիկ հատուկ ծառայությունների միջեւ: Պայքար է ծավալվել Ասիայում կարճ ու երկարաժամկետ ռազմավարությունների իրագործման համակարգված հենակետերի ստեղծման համար»:

Բնական է, որ մոլորակային բնույթի նման մաքառումներում հինգմիլիոնանոց Ղրղզստանը ընդամենը խաղալիք կարող է լինել մեծ տերությունների ձեռքին: Չքննարկելով ղրղզական անհարիրությունների քաղաքական բոլոր բազմաբարդ ենթատեքստերը, կուզենայինք այս անգամ ուշադրություն հրավիրել սոսկ մի գործոնի վրա, որի մասին շատ քիչ է գրվում կամ պարզապես լռության է մատնվում: Խոսքը վերաբերում է թմրամաֆիային ու նրա դերին հիշյալ աշխարհաքաղաքական խաղերում՝ մասնավորապես հենց Ղրղզստանում:

ՆԱՏՕ-ի զորքերի կողմից Աֆղանստանի օկուպացումից հետո այդ երկիրը դարձել է հերոինի արտադրության համաշխարհային կենտրոն, ըստ ռուսական աղբյուրների՝ տարեկան 100 միլիարդ դոլարի «ապրանքաշրջանառությամբ», որից բուն Աֆղանստանում մնում է ընդամենը 4 միլիարդը: Արվում է ամեն ինչ, որ թմրամիջոցները առավելագույնս հասնեն առաջին հերթին Ռուսաստան ու Չինաստան: Իսկ դրանց փոխադրման ճանապարհները անցնում են միջինասիական նորահայտ պետություններով: Այդ իմաստով Ղրղզստանի յուրահատկությունն այն է, որ նա սահմանակցում է Կենտրոնական Ասիայի բոլոր պետություններին (բացառությամբ Թուրքմենստանի): Եվ հենց իր աշխարհագրական դիրքի բերումով Ղրղզստանով է անցնում հիմնական թմրաուղիներից մեկը:

ԱՊՀ երկրների մեջ երկուսը համարվում են չկայացած պետություններ՝ Ղրղզստանը եւ Տաջիկստանը: Եվ գլխավորապես այն պատճառով, որ նրանցում տնտեսական ու քաղաքական առումով ամենահզոր ուժը թմրակառույցներն են, որոնք, մասնագետների կարծիքով, փաստորեն վերածվել են զուգահեռ իշխանության: Այդ նույն Ղրղզստանում թմրամաֆիան, միավորելով հանրապետության բոլոր քրեական կառույցները, իր «ներկայացուցիչներն» ունի պաշտոնական իշխանության գրեթե բոլոր մարմիններում, չհաշված գործակալական ցանցը բոլոր առաջնակարգ պետական կազմակերպություններում: Ներկայումս ամենաուժեղ դիրքերն ունի Օշի խմբավորումը, որտեղով էլ անցնում է հերոինի տարանցիկ փոխադրման կարեւորագույն ուղին: 2005 թվականին հենց Օշի թմրապարագլուխները նպաստեցին Ասկար Ակաեւի գահազրկմանը: Սակայն գալով իշխանության գլուխ, Բակիեւը եւ նրա մերձավորագույն «դաշնակիցները»՝ հարազատները, բարեկամները, թմրաեկամուտներում իրենց բաժինը մեծացնելու մոլուցքով, արեւելյան նենգությամբ սկսեցին նոսրացնել Օշի մրցակիցների շարքերը (ոմանք սպանվեցին, ոմանք անհետ կորան, ոմանք էլ զրկվեցին «օրինական» բիզնեսից): Ահա եւ կառավարական տան վրա գրոհած «խելագարված ամբոխների» միջուկը կազմում էին հենց թմրամաֆիայի՝ ամենաարդիական զենքով զինված գրոհայինները, որոնք էլ չեզոքացրին հատուկ նշանակության պաշտոնական պահպանական զորախմբին: Մի բան, որ հազիվ թե կարողանային իրագործել ավելի շատ թալանով մտահոգված «ժողովրդական զանգվածները» կամ էլ մեկուսացված ընդդիմությունը: Թմրամաֆիան վրեժխնդիր եղավ անշնորհակալ նախագահից: Որ հարձակումը Բակիեւի նստավայրի վրա բնավ էլ տարերային բնույթ չէր կրում, վկայում է նաեւ այն փաստը, որ Մոսկվան ու Վաշինգտոնը մի քանի օր առաջ զգուշացվել էին սպասվող «ապստամբության» մասին:

Բոլոր հեղափոխությունները իրենց խորքում, ինչպես ասվեց, բազմաշերտ են: Թե ինչ միջազգային ուժեր էին գործում Ղրղզստանում, այդ թվում նաեւ կոորդինացնելով թմրամաֆիայի գործողությունները, կարելի է ենթադրել, կռահել, հավաստել: Սակայն Ռուսաստանը, թերեւս, շատ ավելի էր շահագրգռված Բակիեւի տապալմամբ: Մի կողմ դնենք աշխարհաքաղաքական շահերը, թեեւ դրանք առաջին տեղում են (Բակիեւն, օրինակ, Կրեմլից վարկի տեսքով փող ստանալով, խոստացել էր փակել ամերիկյան ռազմական բազան, բայց խոստումը չէր կատարել): Միայն հերոինի հոսքը Ռուսաստան տարեկան խլում է 30 հազար երիտասարդ ռուսաստանցու կյանք, ստեղծում կոռուպցիոն համակարգ իրավապահ (եւ ոչ միայն) մարմիններում եւ այլն: Ռուսաստանին պետք է ղրղզական ուժեղ պետություն, որի հետ նա կարողանա համագործակցել նաեւ ընդդեմ թմրամաֆիայի: Սակայն չարիքն այն է, որ ուժեղ պետությունը հակասում է ազգային թմրամաֆիայի շահերին. վերջինիս շատ ավելի ձեռնտու է թույլ ու կառավարելի իշխանությունը:

Ղրղզստանի նոր ժամանակավոր ղեկավարությունը առաջարկում է փոխել երկրի սահմանադրությունը եւ նախագահական (միանձնյա՝ դիկտատուրական) կառավարումից անցնել խորհրդարանականի (կոլեկտիվ): Սակայն ի՞նչ է նշանակում կոլեկտիվ ղեկավարում կլանային հասարակությունում: Դա նշանակում է դեպի Մոսկվա, Վաշինգտոն ու Պեկին կողմնորոշված քաղաքական ուժերի խառնաժողով, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով կապված կլինեն գերշահավետ թմրաբիզնեսին: Առավել եւս, որ ներկա ղեկավարների մեջ չկա ոչ մի խարիզմատիկ լիդեր:

Կշարունակվի՞ չկայացած մնալ ղրղզական պետությունը: Երեւի:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

**Հ. Գ. Ռուսական որոշ լրատվամիջոցներ Ղրղզստանի վերջին իրադարձությունները ուսանելի են համարում... Հայաստանի համար: Ինչքանո՞վ է դա տեղին, դժվարանում եմ ասել:**

*ԹԵՀՐԱՆ*

# Ահմադինեժադ. «Բեն Լադենին փնտրեք Վաշինգտոնում»

## *«Պատժամիջոցները չեն կարող մեզ կանգնեցնել»*



**Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հերքել է այն լուրերը, թե «Ալ Ղաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենը իբր Թեհրանում է, եւ առաջարկել է թիվ 1 ահաբեկչին փնտրել ԱՄՆ-ում:**

**Ահմադինեժադի կարծիքով, բեն Լադենը գտնվում է Վաշինգտոնում: Նախագահն իր խոսքերը հաստատող ապացույցներ չի բերել, ասելով միայն, որ ինքը «լսել է» այդ մասին:**

**Ֆրանսպրեսը մեջբերում է Ահմադինեժադի հետեւյալ միտքը. «Բեն Լադենն այնտեղ է, քանի որ անցյալում միստր Բուշի ընկերակիցն է եղել»: Ավելին, Ուսամա բեն Լադենը եւ Ջորջ Բուշ կրտսերը «նավթային բիզնեսում գործընկերներ էին»: Ահմադինեժադն ավելացրել է, որ Թեհրանը երբեք չի համագործակցել «Ալ Ղաիդայի» առաջնորդի հետ:**

**BBC-ն վկայակոչում է Իրանի նախագահի այն հայտարարությունը, որ իրանցիները կդիմանան նոր պատժամիջոցներին:**

**«Պատժամիջոցները չեն կարող մեզ կանգնեցնել: Իրանցիները կդիմանան Միացյալ Նահանգների եւ նրա դաշնակիցների ճնշմանը: Մենք ուրախ չենք պատժամիջոցների համար, բայց չենք էլ վախենում դրանցից», ընդգծել է նախագահը:**

**Նա ավելացրել է, որ ի տարբերություն ԿԺԴՀ-ի, Իրանը մտադիր չէ դուրս գալ Միջուկային զենքի չտարածման պայմանագրից:**

**Ինչ վերաբերում է բեն Լադենին, նրա վերջին ելույթը հեռարձակվեց 2010-ի մարտին «Ալ Ջազիրա» հեռուստաալիքով: Իր ելույթում «Ալ Ղաիդայի» առաջնորդը սպառնում էր սպանել իր գրոհայինների ձեռքն ընկած բոլոր ամերիկացիներին, եթե ԱՄՆ-ը որոշի մահապատժի ենթարկել «Ալ Ղաիդայի» առաջնորդներից «Խալեդ» Շեյխ Մուհամմեդին եւ նրա հանցակիցներին:**

# Սմոլենսկի մոտ ընկած «Տու-154»-ի օդաչուական խցիկում կողմնակի անձ է եղել

**Սմոլենսկի մոտակայքում ապրիլի 10-ին տեղի ունեցած Լեհաստանի նախագահի օդանավի աղետին նախորդած վերջին րոպեների նոր մանրամասնությունները հիմք են տալիս ենթադրելու, որ նախագահական «Տու-154»-ի անձնակազմի վրա այնուամենայնիվ ճնշում է գործադրվել: Այդ մասին գրում է Telegraph թերթը: Օդանավի վերջին «սեւ արկղի» վերծանումից պարզվել է, որ օդաչուական խցիկում եղել է մի կողմնակի անձնավորություն:**

**Այդ մարդու անունը չի հրապարակվում՝ ելնելով շարունակվող քննության շահերից: Սակայն դա էլ ավելի է ամրապնդում այն կարծիքը, որ ավիավթարից զոհված նախագահ Լեխ Կաչինսկին ինքն է կարգադրել վայրէջք կատարել՝ չնայելով վատ եղանակին:**

**Լրագրողներն այս կապակցությամբ հիշեցնում են 2008-ի օգոստոսյան միջադեպը, երբ Կաչինսկին իր օդաչուից պահանջել էր վայրէջք կատարել Թբիլիսիի փակ օդանավակայանում: Վատ եղանակի պատճառով օդաչուն հրաժարվել էր դա անել եւ հեռացվել էր աշխատանքից: Այդ թռիչքի ժամանակ երկրորդ օդաչուն Արկադիուշ Պրոտասյուկն էր, որը ապրիլի 10-ին նստած էր Սմոլենսկի մոտ ջախջախված օդանավի ղեկի մոտ:**

**Լեհաստանի պետանվտանգության վարչության նախկին պետ, գեներալ Գրոմոսլավ Չեմպինսկին պնդում է, որ վայրէջքի ժամանակ օդաչուական խցիկում կողմնակի մարդու ներկայությունը դեռ չի ապացուցում, թե անձնակազմի վրա ճնշում է գործադրվել: Միաժամանակ նա կարծում է, որ Լեխ Կաչինսկու օդանավի դեպքում այդ վարկածը որոշ կասկածներ է հարուցում: Աղետի պահին Սմոլենսկի մարզում ստեղծված եղանակային պայմաններում օդաչուի մոտ կողմնակի անձի ներկայությունը կարելի է համարել ծայրահեղ աներաշխավորության? դրսեւորում:**

# Փոթորկից տասնյակ զոհեր Չինաստանում

**ՉԺՀ հարավ-արեւմուտքում՝ խտաբնակ Չունցին քաղաքի շրջակայքում փոթորկից երեկ զոհվել էին տասնյակ եւ տուժել 160 անձինք: Սրանք նախնական տվյալներ են, որոնք կարող են աճել, նշում է Ֆրանսպրեսը, վկայակոչելով Սինհուա գործակալության հաղորդումները: Տեղի հիվանդանոցներում անընդհատ ավելանում է տուժածների թիվը:**

**Մրրկահողմի պոռթկումները Չունցինի արվարձաններում ավերել կամ վնասել են մոտ հազար տուն: 30 միլիոնանոց Չունցինի շրջակայքում վնասվել են ճանապարհներ եւ կամուրջներ, խափանվել է էլեկտրամատակարարումը:**

**Տարերքից տուժած շրջաններում սկսվել է փրկարարական գործողություն: Իշխանությունների մոտավոր հաշվարկների համաձայն, տնտեսական վնասի չափերը ներկայումս գնահատվում են երեք միլիոն դոլար:**

**Փոթորիկն ուղեկցվել է հորդառատ անձրեւներով եւ կարկուտով: Տեղական իշխանությունները նշում են, որ այդ շրջանում նման տարերային աղետներ անցյալում երբեք չեն եղել:**

# Հայկական ռաբիսն ու Ազնավուրի երգերը մեծ ռեյտինգ են վայելում ադրբեջանական ռեստորաններում եւ սրճարաններում

«Արդեն երկու ամիս Բաքվում ես չեմ կարողանում գնալ իմ սիրելի սրճարանները եւ ռեստորանները: Պատճառը հայերն են: Նրանք ամենուր են: Հիմա էլ թափանցել են մեր ռեստորանները, ամենուր հնչում է հայկական մեղեդին», այսպես է սկսում իր հոդվածը Bakililar.az-ի թղթակիցը:

Լրագրողը բոլորս հայտարարեց քաղաքի ռեստորաններին եւ սրճարաններին մեկ ամիս առաջ: «Այցելեցի «Արեւելքի հեքիաթ» ռեստորան, որտեղ հրաշալի ուտեստներ են պատրաստում, բայց չես կարողանում այդ ուտեստները վայելել, երբ անդադար հնչում է հայկական երաժշտությունը: «Ջան բալես, բալես», Թաթա: Ինձ զայրացրեց, որ հայկական երաժշտությունը խանգարում էր միայն ինձ: Սեղանակից երիտասարդները հաճույքով պարում ու երգում էին «Ջան բալես, բալես»-ը: Ռեստորանի ծառայությունները թանկ արժեն, այնտեղ չի կարող գնալ հասարակ բաքվեցին: Սա նշանակում է, որ Բաքվի էլիտար խավը նախընտրում է հայկականը», գրում է լրագրողը:

Հոդվածագիրը պատմում է, որ մեկ ամսվա ընթացքում շրջել է քաղաքի մի շարք սրճարաններով եւ կրկին զայրացել: «Բաքվում մեծ անուն վայելող «Պանորամա» սրճարանում երեկոյան ժամերին հնչում է Առնո Բաբաջանյան, իսկ «Հազար ու մեկ գիշեր» սրճարանում ամենապահանջվածը Շառլ Ազնավուրի երգերն են: Այս բեմում Ազնավուրի երգերը կատարում է երիտասարդ երգչուհի Մարիամ Շաբանովան» («**Ազգը**» մի քանի ամիս առաջ գրել էր, որ Ազնավուրի երգերը կատարելու համար Շաբանովային արգելել են մասնակցել «Եվրոտեսիլ» մրցույթ-փառատոնին-Հ. Հ.):

Հոդվածագրին հայկական երգերի ներկայությունն այնքան է բարկացրել, որ մինչ «լրագրողական պարտքը կատարելը» նա դիմել է նախ ռեստորանների մենեջերներին, սակայն ցանկալին չլսելով՝ դիմել քաղաքային իշխանություններին: Մի շարք ռեստորանների եւ սրճարանների տնօրենների զրույցը ավարտվել է լրագրողի համար ոչ ցանկալի վերջաբանով: Rio Grande սրճարանի տնօրենն ասել է, որ այցելուների մեծ մասը պատկառելի թեյավճար են թողնում, հետեւաբար իրենք չեն կարող հրաժարվել հայկական ռաբիս երաժշտությունից: «Հազար ու մի գիշեր» սրճարանի տնօրենն էլ ասել է, որ բաքվեցիները նախընտրում են այցելել իրենց սրճարանը բացառապես Ազնավուրի երգերը լսելու համար: «Նրանք հայկական երաժշտության շնորհիվ գումարներ են աշխատում, առանց ամաչելու, որ դա մեր թշնամու երգն է», գրում է հոդվածագիրը: Քաղաքապետի լիազորի՝ լրագրողին ուղղված նամակում գրված է, որ վերոնշյալ ռեստորանները համարվում են հարկատուներ, իսկ քանի որ նրանց եկամտի աղբյուրը երաժշտությունն է, իրենք չեն կարող այս պահին միջոցներ ձեռնարկել, հաշվի առնելով տնտեսական խնդիրները:

Լրագրողը հոդվածով իր զայրույթն ու վրդովմունքն արտահայտելով չի սահմանափակվել: Նա Bakililar.az կայքում եւ Facebook սոցիալական ցանցում կազմակերպել է ստորագրահավաք: Նպատակն է՝ ստորագրությունները հանձնել քաղաքային իշխանություններին, սպառնալիքով, որ չեն այցելի վերոնշյալ ռեստորանները, եթե այնտեղ չդադարի հնչել հայկական երաժշտությունը:

Հ. Հ.

AZG NEW PDF.qxd 06/05/2010 21:18 Page 1



# Մարզական

## Դարչինյանը մտադիր չէ սպասել «արքայադուստր» Նոնիտոյին



Առաջին թեթեւագույն քաշային կարգում WBC-ի եւ WBA-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Վախթանգ Դարչինյանի եւ WBA-ի վարկածով աշխարհի ժամանակավոր չեմպիոն Նոնիտո Դոների միջեւ մենամարտ անցկացնելու շուրջն ընթացող բանակցությունները փակուղի են մտել: Վախթանգի ներկայացուցիչները դրանում մեղադրում են Դոների կողմնակիցներին: Ինչպես նշել է Դարչինյանի մենեջեր Էլիաս Նասերը, բանակցությունները սկսելուց երկու օր անց իրենք ստորագրել են պայմանագիրը ու հանձնել Նոնիտո Դոների ներկայացուցիչներին: Սակայն այդ օրվանից արդեն 1,5 ամիս է անցել, իսկ Դոները դեռեւս չի պատասխանել:

Այս հարցի շուրջն իր հստակ տեսակետն է արտահայտել Վախթանգ Դարչինյանը. «Ես երկու վարկածներով աշխարհի չեմպիոն եմ եւ պարտավոր չեմ սպասել Դոներին: Ցանկանում եմ աշխարհի չեմպիոնի տիտղոսները նվաճել 4-5 քաշային կարգերում, ուստի մտադիր չեմ սպասել «արքայադուստր» Նոնիտոյի պատասխանին: Նա գիտի, թե իրեն ինչ է սպասվում, եթե իմ դեմ ռինգ դուրս գա: Ես նրան նոկաուտի կենթարկեմ: Երեւի թե նա ճիշտ է վարվում՝ խուսափելով ռինգ դուրս գալ մի մրցակցի դեմ, որը նրա ողջ կարիերան կոչնչացնի»:

Վախթանգ Դարչինյանը ներկայումս նախապատրաստվում է մայիսի 20-ին Սիդնեյում կայանալիք իր հերթական մենամարտին: Նրա մրցակիցը ֆիլիպինցի Ռիչարդ Գարսիան է: Վերջինս 25 տարեկան է, պրոֆեսիոնալ ռինգում անցկացրել է 32 մենամարտ, որոնցից 21-ում հաղթել է:

## «Շախտյորն» Ուկրաինայի հնգակի չեմպիոն

Առաջնության ավարտից մեկ տուր առաջ Դոնեցկի «Շախտյորը» նվաճեց Ուկրաինայի չեմպիոնի տիտղոսը՝ սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթելով իր գլխավոր հակառակորդ Կիեւի «Դինամոյին»: Այդ հանդիպումից առաջ «Շախտյորը» դինամոյականներին գերազանցում էր 3 միավորով եւ հաղթանակի դեպքում պաշտոնապես կգրանցեր չեմպիոնությունը: Միրչա Լուչեսկուի սաները կատարեցին խնդիրը: Թիմին հաղթանակ պարգեւեց 15-րդ րոպեին Իլսինյոյի խփած միակ գնդակը: «Շախտյորը» կարող էր նաեւ 2-րդ գոլը խփել, սակայն դինամոյականների դարպասապահ Շովկովսկին հետ մղեց Ժադսոնի 11 մ հարվածը:

Դոնեցկի «Շախտյորը» 5-րդ անգամ դարձավ Ուկրաինայի չեմպիոն: Նախկինում թիմն ուժեղագույնն էր ճանաչվել 2002, 2005, 2006 եւ 2008-ին: Թիմի հաջողությունում մեծ է ակումբի նախագահ, «Ֆորբս» ամսագրի տվյալներով Ուկրաինայի ամենահարուստ մարդու՝ Ռինատ Ախմետովի ներդրումը: Նրա նախագահության օրոք «Շախտյորն» Ուկրաինայի առաջնություններում 2-րդ տեղից ցածր հորիզոնականում չի հայտնվել:

## Կիրակոսյանը տիտղոսի հերթական պաշտպանությունը կիրականացնի



Առաջին թեթեւ քաշային կարգում Եվրոպայի չեմպիոն, Ռուսաստանը ներկայացնող գյումրեցի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Լյովա Կիրակոսյանը իր տիտղոսի հերթական պաշտպանությունը կիրականացնի մայիսի 29-ին ֆրանսիական Թուլոն քաղաքում, որտեղ ներկայումս բնակվում է: 36-ամյա հայ բռնցքամարտիկի մրցակիցը կլինի բելգիացի Էրմանո Ֆեգատիլին: Վերջինս 25 տարեկան է, պրոֆեսիոնալ ռինգում անցկացրել է 26 մենամարտ, որից 22-ում հաղթել է, 4-ում պարտվել:

Լյովա Կիրակոսյանը պրոֆեսիոնալ ռինգում նորամուտը նշել է 1999-ին: Նա իր մարզական կարիերայի մեծ մասն անցկացրել է Եվրոպայում: Նրա մրցակիցների թվում եղել են անվանի բռնցքամարտիկներ Խուան Ուրանգոն եւ Սերգեյ Գուլյակեւիչը: Պրոֆեսիոնալ ռինգում Կիրակոսյանը 37 մենամարտ է անցկացրել, որից 32-ում հաղթել է, 5-ում՝ պարտվել: Այդ մենամարտերից 22-ը նա ավարտել է ժամկետից շուտ: Վերջին մենամարտը Կիրակոսյանն անցկացրել է փետրվարի 19-ին անգլիացի Սկոտ Լոուտոնի հետ: Հայ բռնցքամարտիկը հաղթել է 3-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով:

## Բանակցությունները կսկսվեն առաջնությունից հետո

«Մանչեսթեր Յունայթեդի» ղեկավարությունը համաձայնության է եկել Ուեյն Ռունիի գործակալ Պոլ Ստրետֆորդի հետ մինչեւ աշխարհի առաջնության ավարտը չսկսել բանակցությունները նոր պայմանագրի շուրջը: Սա իր մեջ որոշակի ռիսկ է պարունակում: Եթե Անգլիայի հավաքականը, որի կազմում է նաեւ Ռունին, հաջող հանդես գա աշխարհի առաջնությունում, ապա ֆուտբոլիստի ներկայացուցիչներն ակումբից ավելի բարձր աշխատավարձ կպահանջեն:

Ընթացիկ մրցաշրջանում Ուեյն Ռունին գերազանց է իրեն դրսեւորում՝ աչքի ընկնելով ռմբարկուի հատկանիշներով: Նա թիմի կազմում պաշտոնական մրցումներում արդեն 34 գոլ է խփել: Ռունին ներկայումս շաբաթական 90 հազար ֆունտ ստեռլինգ է ստանում: Նրա պայմանագրի ժամկետը լրանում է երկու տարի անց: Սակայն մրցաշրջանի ավարտից հետո պայմանագիրը կվերանայվի: Ներկայումս «Մանչեսթեր Յունայթեդում» ամենաբարձր վարձատրվողն Անգլիայի հավաքականի ավագ Ռիո Ֆեռդինանդն է, որը շաբաթական 110 հազար ֆունտ ստեռլինգ է ստանում:

## Ջոն Ռուիզը կհեռանա ռինգից

WBA-ի վարկածով գերծանրքաշային կարգի աշխարհի նախկին չեմպիոն Ջոն Ռուիզը հայտարարել է ռինգից հրաժեշտ տալու մասին:

«Ժամանակն է շրջել էջը եւ սկսել կյանքի նոր հատվածը: Ափսոս, որ վերջին մենամարտը չստացվեց այնպես, ինչպես ցանկանում էի, սակայն դա բռնցքամարտ է: Ես հպարտանում եմ իմ նվաճումներով. եղել եմ աշխարհի կրկնակի չեմպիոն, 12 չեմպիոնական մենամարտ եմ անցկացրել ու դարձել եմ գերծանրքաշային կարգում լատինաամերիկացի առաջին չեմպիոնը: Մշտապես ցանկացել եմ օգուտ տալ հասարակությանը եւ զբաղվել բարեգործությամբ: Այժմ շատ ժամանակ կունենամ աշխատելու երեխաների հետ: Հնարավոր է, որ հետագայում վերսկսեմ մարզումները, սակայն այժմ ցանկանում եմ ժամանակ անցկացնել կնոջս եւ երեխաներիս հետ: Բռնցքամարտը դաժան մարզաձեւ է, միեւնույն ժամանակ հիասքանչ է: Հետին հայացք նետելով, կարող եմ ասել, որ գոհ եմ մարզական իմ կարիերայից: Իսկ առջեւում ինձ լուսավոր ապագա է սպասում», հայտարարել է Ռուիզը, որը պատրաստվում է Բոստոնում բռնցքամարտի դպրոց հիմնել եւ մարզել երեխաներին:

### ՇԱԽՄԱՏ

## Անհաջողությունները հետապնդում են հայ շախմատիսուհիներին

**Շախմատի Գրան պրիի մրցաշարի 9-րդ տուրն անհաջող էր հայ շախմատիսուհիների համար, որոնք հերթական պարտությունները կրեցին: Լիլիթ Մկրտչյանը սպիտակներով զիջեց հնդիկ գրոսմայստեր Համփի Կոներուին: Էլինա Դանիելյանն էլ սպիտակներով պարտություն կրեց Բաթյուհագ Մոնգոնտուլից: 9 տուրից հետո Լիլիթը 4 միավորով Ժաո Քյուի եւ Մոնգոնտուլի հետ բաժանում է 7-9-րդ տեղերը: Իսկ Էլինա Դանիելյանը 1,5 միավորով շարունակում է եզրափակել աղյուսակը:**

**Իր վստահ ելույթներն է շարունակում ռուսաստանցի գրոսմայստեր Տատյանա Կոսինցեւան, որը 3-րդ անընդմեջ պարտիան ավարտեց ոչ-ոքի՝ այս անգամ հաշտություն կնքելով Ժու Չենի հետ: Մրցաշարի ավարտից 2 տուր առաջ Կոսինցեւան 7 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը: 6-ական միավորով 2-3-րդ տեղերն են բաժանում Պիա Կրամլինգն ու Հոու Յիֆանը: Կրամլինգը հաղթեց թուրք շախմատիսուհի Բեթյուլ Յիլդիզին, իսկ Յիֆանը պարտության մատնեց Բահրա Կովանովային:**



**5,5-ական միավոր ունեն Նանա Ձագնիձեն եւ Ժու Չենը: Ձագնիձեն հաշտություն կնքեց Ժաո Քյուի հետ: 5 միավոր է վաստակել Համփի Կոներուն, 3՝ Բահրա Կովանովան, 2,5՝ Բեթյուլ Յիլդիզը:**

**Մրցաշարի ավարտական երկու տուրերում Լիլիթ Մկրտչյանը մրցելու է Բեթյուլ Յիլդիզի եւ Տատյանա Կոսինցեւայի հետ: Էլինա Դանիելյանի մրցակիցները կլինեն Նանա Ձագնիձեն եւ Բահրա Կովանովան:**

**Հիշեցնենք, որ Նալչիկի մրցաշարը կանանց Գրան պրիի շարքի 3-րդ մրցամարտն է: Լիլիթ Մկրտչյանն ու Էլինա Դանիելյանը 2-րդ մրցաշարին են մասնակցում: Էլինան հանդես է եկել Ստամբուլում ու հաշվարկային 120 միավոր է վաստակել: Լիլիթը չինական Նանկին քաղաքում անցկացված մրցաշարում 80 միավոր է վաստակել: Ընդհանուր հաշվարկով Գրան պրիի խաղարկության առաջատարը չին շախմատիսուհի Ժաո Քյուն է, որը մասնակցելով նախորդ երկու մրցաշարերին, վաստակել է 210 միավոր: 160-ական միավոր ունեն Համփի Կոներուն, Հու Յուիուան եւ Մարի Սեբագը: Տատյանա Կոսինցեւայի համար Նալչիկի մրցաշարն առաջինն է: Հաղթելու դեպքում նա կվաստակի 160 միավոր ու լավ հնարավորություն կստանա պայքարելու Գրան պրիի խաղարկությունում առաջին տեղը գրավելու համար: Նշենք, որ Գրան պրիի հաղթողն իրավունք կստանա հաջորդ տարի աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը վիճարկել նոկաուտ համակարգով Թուրքիայում անցկացվելիք մրցաշարում առաջին տեղը զբաղեցրած շախմատիսուհու հետ: Հիշեցնենք, որ Գրան պրիի 4-րդ մրցաշարն անցկացվելու է Ջերմուկում հունիսի 23-ից հուլիսի 6-ը, որին կմասնակցեն Լիլիթ Մկրտչյանն ու Էլինա Դանիելյանը:**

## «Ինտերի» առաջին մրցանակը

**Ընթացիկ մրցաշրջանում իտալական «Ինտերն» առաջին մրցանակը շահեց՝ նվաճելով երկրի գավաթը: Վճռորոշ խաղում Ժոզե Մոուրինյոյի սաները 1-0 հաշվով հաղթեցին «Ռոմային»: Մրցանակի բախտը վճռեց 40-րդ րոպեին Միլիտոյի խփած միակ գնդակը:**

**«Ինտերը» շարունակում է պայքարը նաեւ Իտալիայի չեմպիոնի եւ չեմպիոնների գավաթակրի տիտղոսների համար:**

## 1 մլն ռանդ յուրաքանչյուր գոլի դիմաց

**Հարավաֆրիկյան Հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիան աշխարհի առաջնությունում ազգային հավաքականի խփած յուրաքանչյուր գոլի դիմաց 1 մլն ռանդ (մոտ 132 հազար դոլար) պարգեւավճար կվճարի: Վերջին տարիներին հավաքականի ֆուտբոլիստներն աչքի չեն ընկնում արդյունավետ խաղով: 1992-ից անցկացրած 250 խաղերի միջին արդյունավետությունը կազմել է ընդամենը 1,1 գոլ: Ֆեդերացիան հույս ունի պարգեւավճարի շնորհիվ խթանել ֆուտբոլիստներին:**

## Կանավարոն հրաժեշտ կտա հավաքականին

Սովորաբար ֆուտբոլային խոշոր մրցաշարերից՝ աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններից հետո վետերան որոշ ֆուտբոլիստներ հրաժեշտ են տալիս ազգային հավաքականներին: Իտալիայի հավաքականի ավագ Ֆաբիո Կանավարոն էլ մտադիր է աշխարհի առաջնությունից հետո հրաժեշտ տալ հավաքականին: 36-ամյա ֆուտբոլիստը նշել է, որ իրեն շատերն արդեն ծեր են համարում:

Կանավարոն Իտալիայի հավաքականի ավագի պաշտոնում փոխարինել էր Պաոլո Մալդինիին: Վերջինս ազգային հավաքականում 126 խաղ է անցկացրել: Կանավարոյին հաջողվեց գերազանցել լեգենդար Մալդինիի ռեկորդը: Նա հավաքականում արդեն 132 խաղ է անցկացրել:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Անշարժ գույքի գների փոքր աճի միտումը պահպանվում է

## *Շարունակվում են ավելանալ հիպոթեկային գործարքները*

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2010-ի մարտին Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 14951 գործարք, ինչը 11,4 տոկոսով բարձր է փետրվարի եւ 30,4 տոկոսով՝ 2009-ի մարտի գործարքների համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը մարտին փետրվարի համեմատ աճել է 18,7 տոկոսով, իսկ անցյալ տարվա մարտի համեմատ՝ 35,7 տոկոսով: 3940 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 81,1 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36,9 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 63,8 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2010-ի փետրվարի համեմատ, բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում մարտին աճել է 21,1 տոկոսով, իսկ նախորդ տարվա մարտի համեմատ՝ 35,7 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա մարտին փետրվարի համեմատ աճել են՝ 1,4 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | մարտ 2009 թ. | մարտ 2010 թ. | փետրվար 2010 թ. |
| Կենտրոն | 515600 | 469200 | 469200 |
| Արաբկիր | 388400 | 380000 | 370800 |
| Քանաքեռ-Զեյթուն | 299100 | 286100 | 281200 |
| Նոր Նորք | 258600 | 237600 | 234400 |
| Ավան | 256700 | 239300 | 235700 |
| Էրեբունի | 271500 | 251400 | 246500 |
| Շենգավիթ | 264700 | 252200 | 247300 |
| Դավթաշեն | 279200 | 274000 | 269000 |
| Աջափնյակ | 254700 | 240500 | 240500 |
| Մալաթիա-Սեբաստիա | 245100 | 240300 | 235000 |
| Նուբարաշեն | 154700 | 144300 | 143500 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 289800 | 274100 | 270300 |

Մարզերում, բացառությամբ Երեւանի, մարտին վաճառվել են 367 բնակարաններ, որոնց քանակը փետրվարի համեմատ աճել է 19,5 տոկոսով, իսկ 2009-ի մարտի համեմատ՝ 69,1 տոկոսով: Բնակարանների միջին գները փետրվարի համեմատ աճել են 0,8 տոկոսով:

Երեւանից հետո ամենաթանկ բնակարանները մարտին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 181 հազար դրամ: Աբովյանում 1 քմ գինը 160 հազար դրամ է կազմել, Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 158 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 142 հազար դրամ, Գորիսը՝ 139 հազար դրամ, Իջեւանը ՝ 138 հազար դրամ, Մասիսը՝ 128 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

2010-ի մարտին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 425 գործարք, որից 116-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2010-ի փետրվարի համեմատ աճել է 56,8 տոկոսով, իսկ մարզերում՝ 4 տոկոսով: 2009-ի մարտի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 2,1 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 47,8 տոկոսով:

Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2010-ի մարտին փետրվարի համեմատ աճել են 1 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | մարտ 2009 թ. | մարտ 2010 թ. | փետրվար 2010 թ. |
| Կենտրոն | 540000 | 486300 | 485300 |
| Արաբկիր | 432700 | 386000 | 379400 |
| Քանաքեռ Զեյթուն | 332500 | 291100 | 288700 |
| Նորք Մարաշ | 327100 | 285300 | 284500 |
| Ավան | 299500 | 243300 | 238500 |
| Էրեբունի | 305900 | 255700 | 251700 |
| Շենգավիթ | 300000 | 255200 | 251500 |
| Դավթաշեն | 328700 | 280500 | 277500 |
| Աջափնյակ | 294300 | 246500 | 243800 |
| Մալաթիա-Սեբաստիա | 289800 | 244500 | 242300 |
| Նուբարաշեն | 175300 | 147700 | 147500 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 329600 | 283800 | 281000 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները մարտին փետրվարի համեմատ նույնպես աճել են 1 տոկոսով, իսկ ամենաթանկ անհատական տները դարձյալ Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 307 հազար դրամ: Այս ցուցանիշով Ծաղկաձորը զիջում է միայն Երեւանի Կենտրոն եւ Արաբկիր շրջաններին: Երկրորդը Աբովյանն է 1 քմ-ն 168 հազար դրամ, երրորդը Վաղարշապատն է որտեղ 1 քմ-ն կազմել է 166 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը 148 հազար դրամ, Գորիսը 144 հազար դրամ, Իջեւանը՝ 142 հազար դրամ, Նոր Հաճընը 135 հազար դրամ, Եղվարդը՝ 128 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2010-ի մարտին 2009-ի մարտի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 28,4 տոկոսով, աճուրդով վաճառքներինը նվազել 12,3 տոկոսով:

2010-ի մարտին 2010-ի փետրվարի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 14 տոկոսով, իսկ 2009-ի մարտի համեմատ նվազել՝ 10,8 տոկոսով:

Մարտին իրականացվել են հիպոթեկային գրավադրման 161 գործարքներ, որից 118-ը՝ Երեւանում: Հիպոթեկային գրավադրման գործարքներից 78,3 տոկոսն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 15,5 տոկոսը՝ անհատական բնակելի տների, մնացածը հասարակական նշանակության օբյեկտների, այգետնակների եւ հողերի նկատմամբ: 2010-ի փետրվարի համեմատ, հիպոթեկային գրավադրման գործարքների քանակն աճել է 50,5 տոկոսով, ընդ որում Երեւանում՝ 49,4 տոկոսով, իսկ մարզերում՝ 53,6 տոկոսով: 2009-ի մարտի համեմատ, հիպոթեկային գրավադրման գործարքների քանակն աճել է 4,5 անգամ, ընդ որում, Երեւանում՝ 3,8 անգամ, մարզերում՝ 8,6 անգամ:

Այսպիսով, 2010-ի մարտին պահպանվել է անշարժ գույքի գների վերջին մի քանի ամիսներին արձանագրվող ամսական փոքր աճը: Այս միտումը, ինչպես նշել էինք նախկինում, հավանաբար, դեռ կշարունակվի առաջիկա ամիսներին: Պահպանվում են նաեւ ընդհանուր գործարքների թվի զգալի աճի տեմպը եւ հիպոթեկային վարկավորման գործարքների նույնպես զգալի աճի միտումը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

VIVAcell MTS

ՎիվաՍել-ՄՏՍ-ը հայտարարում է, «Բջջային հեռուստատեսություն» ծառայության կոմերցիոն մեկնարկի մասին: Ս.թ. մայիսի 17-ից հեռուստահաղորդումներն իրական ժամանակում դիտելու համար անհրաժեշտ կլինի գնել հեռուստաալիքների փաթեթ tv.vivacell.am կամ tv.mts.am կայքից: Առայժմ «Բջջային հեռուստատեսությամբ» իրական ժամանակում հնարավոր կլինի դիտել «Basic» փաթեթում ներառված հետեւյալ հեռուստաալիքները.

- ATV
- Արմենիա
- Դար 21
- Երկիր Մեդիա
- Կենտրոն
- Հ1
- Հ2
- Հայ TV
- Շանթ

Փաթեթի արժեքը մեկ օրվա համար կկազմի 400 դրամ (ներառյալ ԱԱՀ): Հեռուստաալիքները հնարավոր կլինի դիտել գնման պահից սկսած 24 ժամվա ընթացքում:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ՝ 2010Թ. ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՆ, ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ, «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ,**

***ՀԱՍՑԵՆ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/:***

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

ՀՀ կառավարության 19.04.07թ. թիվ 475-Ա որոշմամբ լուծարվող «Բաղրամյանի նավթամթերք» ՓԲԸ-ի (հասցեն՝ Արագածոտնի մարզ, ք. Թալին) հաշվեկշռում գտնվող գույքը

| N | Գույքի անվանումը | Քանակը /հատ/ | Թողարկման տարեթիվը | Վաճառքի մեկնարկային գինը (ներառյալ ԱԱՀ-ն) /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | «Բաղրամյանի նավթամթերք» ՓԲԸ-ի գույքը, որպես մեկ ամբողջական միավոր այդ թվում` | | | |
| | Ավտոլիցքավորման կայան (Ա/Գ սեփ. վկայական 2561770) | 1 | | 1800000 |
| | Ցուցատախտակ | 1 | 1985թ. | |
| | ԿԱԼԿ-ի տնակ և տարողության տնակ | 1 | 1989թ. | |
| | ԿԱԼԿ-ի տնակ | 1 | 1986թ. | |
| | ԿԱԼԿ-ի տնակ | 1 | 1986թ. | |
| | ԶԻԼ 130 ա/մ-ի ցիստեռն 4,2 | 1 | 1986թ. | |

* Գնորդը պարտավոր է աճուրդի արձանագրությունը ստանալուց հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով վճարել անշարժ գույքի զբաղեցրած 2006.0 ք.մ. հողամասի կադաստրային արժեքը:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք մինչեւ յուրաքանչյուր աճուրդի նախորդ աշխատանքային օրը, ժամը 17:00-ին աճուրդային հանձնաժողովին են ներկայացրել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է 90000 դրամ: Մուտքագրման հաշիվն է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի թիվ 163518001652 դրամային հաշիվը: Նախավճարը կարող է վճարվել նաեւ կանխիկ «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) մինչեւ աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են ընդհուպ մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի համարին համապատասխան, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը:

Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով (5%):

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է համարվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկված գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից, իսկ լոտի աճուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկված գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթած մասնակիցներին, մուծված նախավճարը վերադարձվում է աճուրդի ավարտից մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմումի առկայության դեպքում:

Վաճառվող լոտին ծանոթանալու համար զանգահարել (091) 508322 հեռախոսահամարով Գ. Հարությունյանին:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4րդ հարկ/ հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումներն կիրառվեն այն ձեւով ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

**«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն**

## Ուշադրություն

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակը (ՄԱԲՀ) հայտարարում է լրահոսի վերլուծության մրցույթ:

Մրցույթի պայմաններին կարելի է ծանոթանալ http://www.un.am/?laid=1&com=module&module=menu&id=68 կայքում, կամ ՄԱԿ-ի գրասենյակից, հասցե՝ Պ. Ադամյանի փ 14.,I հարկ, 113 սենյակ; հեռ. 54 34 17; Աիդա Ղազարյան, ՄԱԲՀ ծրագրերի պատասխանատու:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է ս.թ. 14 մայիսի, ժամը 17:00:

Ուշացումով հանձնած առաջարկները կհամարվեն անվավեր:

www. azg.am

## Հայտարարություն

Սույն թվականի մայիսի 14-ին, ժամը 12:00-ին «Տիգրան եւ Վահե» ՍՊԸ կազմակերպում է հասարակական լսումներ ՀՀ Գեղարքունիքի մարզի, ք. Սեւան «Ծովլոռ» ռեստորանից արեւելք ընկած տարածքում նախատեսվող հանգստի գոտու շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում:

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 6.05.2010 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 385.55 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 500.06 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 12.98 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 217.91 |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 6.05.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: